



Հայաստանի ինտեգրացիոն քաղաքականությունը

Վերլուծական հոդվածաշար

Հայաստանի ինտեգրացիոն քաղաքականությանը նվիրված վերլուծական հոդվածաշար. Երևանի մամուլի ակումբի շարքն ամփոփում է Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի հետ համագործակցությամբ կազմակերպված «Հայաստանը Եվրամիության և Եվրասիական միության միջև. գնահատելով նոր մարտահրավերներն ու հնարավորությունները» թեմայով կլոր սեղանների քննարկումներում հնչած տեսակետները և դիտարկումներ:

Երևան
2014-2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՍՈՑՅՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՇՈՒՐՁ	3
ՄԻՈՒԹՅՈՒՆ, ՈՐՏԵՂ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՉԵՆ ՄՊԱՍՈՒՄ.....	6
ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԻՆՏԵԳՐԱՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՏԵՍԵԼԻ «ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐԸ»	9
ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ՝ ՈՐՊԵՍ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ.....	12
ԴԻՄԱԿՆԵՐ ՊԱՏՈՒԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ. ՓՆՏՐՎՈՒՄ ԵՆ ԻՐԱԿԱՆ ԴԵՄՔԵՐ.....	16
ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄՊԱՍՈՒՄ Է ՌԵՖՈՐՄՆԵՐԻ ՇԱՐԺԻՉ ՈՒԺԻ Ի ՀԱՅՏ ԳԱԼՈՒՆ	20
ԵՄ-ՀՀ ԱՊԱԳԱ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	24
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ՇՈՒՐՁ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ. ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԵՐԸ.....	28
ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ՝ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ.....	32
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԱՂԳ ՌԻԳԱՅԻ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎԻՑ ՀԵՏՈ.....	36
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԿԱՍԿԱԾԵԼԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ.....	39
ԱՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆ՝ ԵՄ-ՀՀ ԲԱՆԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՇԵՄԻՆ.....	42

ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՍՈՑԱՑՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՇՈՒՐՁ

Մայիս 2014

Մոտավորապես չորս տարի Հայաստանը բանակցություններ էր վարում Եվրոպական միության հետ Ասոցացման համաձայնագրի շուրջ: Դրանք կարելի է համարել հայաստանյան նորագույն դիվանագիտության ամենահաջողված բանակցությունները: Այդ բանակցությունները որոշակիորեն հակասում են համընդհանուր այն պատկերացումներին, որ Եվրամիությունը կոշտ երկխոսություն է վարում բոլոր նրանց հետ, ովքեր իր հետ մտերմության փորձեր են անում: Դրույթների մեծ մասում, որոնք կարող էին Երևանի համար «դիսկոմֆորտ» առաջացնող պայմաններ պարունակել և կոնկրետ պարտավորությունների կատարման առումով սկզբունքային խոչընդոտներ հանդիսանալ, հայաստանյան բանակցողների թիմը բավական ճկուն ձևակերպումներ «պոկեց»:

Համաձայնագրի հենց այդ բաժիններն էլ դարձան Ասոցացման համաձայնագրի հակառակորդների (բացահայտ կամ թաքնված) կողմից առավել ակտիվ մանիպուլյացիաների առարկա: Մասնավորապես, բազմաթիվ շահարկումներ եղան այն կապակցությամբ, որ ԵՄ-ի հետ հարաբերությունների նոր մակարդակը սահմանափակում է իր ռազմավարական դաշնակից Ռուսաստանի հետ Հայաստանի համագործակցության հնարավորությունները: Քարոզչական շրջանառության մեջ ներդրվեցին արհեստական «կամ-կամ», «ոչ-ոչ», «և-և» բանաձևերը: «Կամ-կամ» սկզբունքի պարտադրումով, չգիտես ինչու, հասկանում էին ԵՄ պաշտոնական դեմքերի հայտարարությունները՝ Մաքսային միությանն անդամակցության հետ Ասոցացման համաձայնագրի անհամատեղելիության մասին: Ընդ որում, նման մեկնաբանությունը ժամանակ առ ժամանակ խրախուսվում էր նաև ՀՀ իշխանության ներկայացուցիչների կողմից, պնդումով, որ իրենք միշտ կողմնակից են եղել «և-և» բանաձևին, և որ իրենց զարմացնում են ինտեգրման երկու նախագծերի անհամատեղելիության մասին հայտարարությունները: Փաստորեն, հայաստանյան քաղաքական վերնախավը և նրա վերահսկողության տակ գտնվող տեղեկատվական ռեսուրսները որոշեցին «իրենց միամիտի տեղ դնել»: Իրականում ԵՄ-ի հետ Ասոցացման համաձայնագիրը, ներառյալ երկրի մուտքը ազատ առևտրի գոտի, որևէ կերպ չի սահմանափակում Երևանի մասնակցությունը ինտեգրացիոն ՄԻՄԵՏՐԻԿ սխեմաներին: Մասնավորապես, Հայաստանը կարող էր մուտք գործել ազատ առևտրի այլ գոտիներ, այդ թվում՝ Ռուսաստանի և հետխորհրդային այլ երկրների հետ համապատասխան համաձայնագրեր կնքել: Այդ իմաստով հենց Ասոցացման համաձայնագրի պայմաններն էին թույլ տալիս լավագույնս իրագործել «և-և» բանաձևը: Եվ հենց Մաքսային միությունն է, որ իր պրոտեկցիոնիստական մեխանիզմներով բացառում է մասնակցությունը այլ ինտեգրացիոն գործընթացների՝ ստիպելով իր անդամներին «կամ-կամ» ընտրություն կատարել...

Որպես հայաստանյան հասարակության մանիպուլյացիայի շարունակություն՝ պարտադրվեց այն գաղափարը, իբրև թե «հնարավոր չէ լինել անվտանգության մի համակարգում (նկատի էր առնվում ՀՀ անդամությունը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը- **Հեղ.**), իսկ տնտեսությամբ ինտեգրվել այլընտրանքային ուղղության մեջ»: Սակայն, նախևառաջ, ոչ մի «այլընտրանքային» համակարգի Հայաստանը չէր ինտեգրվում. նա պահպանում էր, ինչպես վերևում նշվեց, Ռուսաստանի, Ղազախստանի և Բելառուսի հետ

Եվրամիության տնտեսական հարաբերությունների նույն սխեման ունենալու իր անկախությունը: Եթե Ասոցացման համաձայնագիրը ենթադրում էր ավելի բարձր չափորոշիչներ հայաստանյան արտադրանքի համար, որը ԵՄ շուկաներ ազատ մուտքի էր հավակնում, ապա Երևանի մյուս առևտրային գործընկերները (նույն Մոսկվան, Աստանան կամ Մինսկը) դրանից միայն կարող էին շահել: Ի դեպ, համապատասխան չափորոշիչները, որոնք ընդունված են ՄՄ հիմնադիր-անդամ երկրներից մեկում՝ Բելառուսում, այսօր էլ ավելի բարձր են, քան ընդհանուր առմամբ ամբողջ Մաքսային միությունում... Երկրորդ՝ Մաքսային միության շրջանակներում լրջորեն քննարկվում էր Թուրքիայի անդամակցության հարցը: Իսկ Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաևը նույնիսկ համապատասխան պաշտոնական առաջարկ արեց Անկարային: Այդ դեպքում ո՞ւր մնաց Թուրքիայի անդամակցությունը ՆԱՏՕ-ի ռազմա-քաղաքական դաշինքին: Թե՞ ՄՄ անդամ երկրների մայրաքաղաքներում այնքան միամիտ են, որ հնարավոր են համարում Թուրքիայի դուրս գալը Հյուսիսատլանտյան դաշինքից: Եվրամիության հետ ՀՀ ասոցացման դեմ այս «փաստարկները» նախատեսված մոլորեցված լսարանի համար, այլ կերպ չես անվանի, քան՝ դեմագոգիա:

ԵՄ-ի հետ Ասոցացման համաձայնագրի Հայաստանի տարբերակում սկզբունքային կերպով հաշվի էր առնվել վերջինիս անդամակցությունը ՀԱՊԿ-ին. հենց այդ հանգամանքն էր պայմանավորել փաստաթղթի՝ անվտանգության ոլորտում համագործակցությանը նվիրված բաժնի շատ ավելի համեստ լինելը, քան ՆԱՏՕ-ի անդամակցության նկրտումներ ունեցող մյուս երեք երկրների (Վրաստան, Մոլդովա և Ուկրաինա) դեպքում: Եվ Համաձայնագիրը ՀԱՊԿ-ի իր գործընկերների հետ Երևանի պայմանագրային հարաբերությունների վերանայման որևէ նախադրյալ չէր պարունակում: Ինչպես նաև, ի տարբերություն վերոնշյալ երեք երկրների, Հայաստանը բանակցային գործընթացում երբեք չի դրել ԵՄ անդամակցության հեռանկարի հարցը և մտադրություն չի ունեցել Ռուսաստանի հետ իր երկկողմ հարաբերություններում կամ ԱՊՀ շրջանակներում համագործակցության մեջ փոփոխություններ մտցնել: Այլ կերպ ասած՝ ԵՄ-ի հետ Ասոցացման համաձայնագրի ստորագրման դեպքում ոչ ոք Հայաստանին «ԵՄ կամ Ռուսաստան» ընտրության առջև չի դրել: Եվ առնվազն ՀՀ-ի դեպքում, ԵՄ ներկայացուցիչների կողմից հավաստիացումներն այն մասին, որ Արևելյան գործընկերությունը և Ասոցացման համաձայնագիրը Մոսկվայի շահերի և գործընկեր երկրների հետ նրա փոխհարաբերությունների դեմ չեն, առավել քան լուրջ հիմքեր ունեին: Պնդել հակառակը՝ հավասարազոր է այն կարծիքին, թե Հայաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական զարգացումը, որպես այդպիսին, արդեն իսկ ուղղված է ռուսաստանյան շահերի դեմ: Բայց եթե այդպես է, ապա խնդիրը Հայաստանը և ԵՄ-ի հետ նրա հարաբերությունները չեն, այլ նրանք, ովքեր ձևակերպում և փորձում են իրականացնել Մոսկվայի այդօրինակ «շահերը»...

Ասոցացման համաձայնագրի հետ կապված առասպելներից մեկն էլ վերաբերում էր Հայաստանի հասարակական կարծիքի համար շատ զգայուն մի թեմայի՝ Ղարաբաղյան հակամարտությանը: Մասնավորապես, Համաձայնագրի հակառակորդներն ակտիվորեն տարածում էին տեքստում Լեռնային Ղարաբաղի՝ ազգային շահերի տեսանկյունից անընդունելի ապագա կարգավիճակին առնչվող ենթադրյալ կետի առկայության մասին կեղծիքը: Դժվար է ասել՝ ում և ինչի վրա էին հույս դրել այս սուտը հորինողները, քանի որ ցանկացած մարդու համար, ով գոնե մի քիչ պատկերացում է, թե ինչպես են կարգավորվում այնպիսի հակամարտությունները, ինչպիսին Ղարաբաղի խնդիրն է, պետք է որ ականհայտ լինի, որ Ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունների ձևաչափը և բնույթը բացառում են այդ

փաստաթղթում ԼՂ-ի կարգավիճակի հարցն արծարծելու հնարավորությունը: Մինչդեռ չճանաչված հանրապետության համար իրական վտանգներն առկա էին հենց Մաքսային (Եվրասիական) միության համատեքստում, ինչպես ցույց տվեց Աստանայում Եվրասիական բարձրագույն տնտեսական խորհրդի 2014 թվականի մայիսի 29-ի նիստը:

Նույնիսկ Մեծամորի ատոմային էլեկտրակայանի ապագային վերաբերող հարցում, որտեղ հայկական կողմի դիրքերը խիստ խոցելի են՝ նկատի ունենալով այն վտանգները, որոնք տարածաշրջանի համար ներկայացնում է ՀԱԷԿ-ը, Ասոցացման համաձայնագրի նախագծում առավել «փափուկ» ձևակերպումներ են տրվել, քան ԵՄ և ՀՀ հարաբերությունները կարգավորող նախկին փաստաթղթերում: Համաձայնագրի տեքստում ատոմակայանի փակման հնարավորությունն ուղղակիորեն կապվում էր այլընտրանքային միջոցներով Հայաստանի էներգետիկ անվտանգությունն ապահովելու հետ:

Դե հիմա համեմատեք այս մոտեցումները՝ ԵԱՏՄ-ին Հայաստանի Հանրապետության «ինտեգրման» գործընթացի հետ...

ՄԻՈՒԹՅՈՒՆ, ՈՐՏԵՂ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՉԵՆ ՄՊԱՍՈՒՄ

Հունիս 2014

Բելառուսի, Ղազախստանի և Ռուսաստանի Մաքսային միությանը Հայաստանի միանալու խոչընդոտների մասին լավ հայտնի էր դեռ 2013 թվականի սեպտեմբերի 3-ից առաջ, երբ ՀՀ նախագահը հայտարարեց ՄՄ մտնելու և Եվրասիական Միության ձևավորմանը մասնակցելու՝ երկրի մտադրության մասին, ձախողելով ԵՄ հետ Ատոցացման համաձայնագրի նախաստորագրումը: Դրանցից որոշների, առաջին հերթին՝ այդ Միության երեք երկրներից որևէ մեկի հետ ընդհանուր սահման չունենալու մասին, մի քանի տարի շարունակ բազմիցս խոսում էին ՀՀ բարձրաստիճան պաշտոնյաները, այդ թվում վարչապետ Տիգրան Սարգսյանը: Մյուս խոչընդոտները մանրամասն քննարկման նյութ դարձան սեպտեմբերի 3-ից հետո: ՄՄ կողմնակիցները, ինչպիսիք մի օրում՝ համոզմունքով թե ակամա, դարձան հայկական քաղաքական վերնախավի գրեթե բոլոր ներկայացուցիչները, ինտեգրման նոր ուղղության «ընտրությունը» պաշտպանելիս բերում էին առաջինը մտքներն եկած փաստարկները: Իբրև թե ընդհանուր սահմանի բացակայությունը խնդիր չէ. Հայաստանից դուրս գալիս՝ ՄՄ գործընկերների համար նախատեսված բեռնարկները հայ-վրացական սահմանին պարզապես կդրոշմակնքվեն՝ առանց մաքսային ձևակերպումներ անցնելու տրանզիտով կհասցվեն մինչև վրաց-ռուսական սահման և միայն այնտեղ կմաքսագերծվեն: Նույն կերպ կլինի հակառակ ուղղությամբ փոխադրվող բեռների դեպքում: Ի՛նչ պարզ է ու հասարակ: Ըստ որում, այս հանճարեղ մեթոդը բացահայտողներն իրենց նեղություն չէին տալիս հարցնել, արդյո՞ք այն ընդունելի է Վրաստանի համար: Իսկ երբ հարցրեցին՝ արդեն որոշումն ընդունելուց շատ ամիսներ անց, պարզվեց, որ այդ փաստարկները հիմնագուրկ էին:

Հայերին գայթակղությամբ դեպի Մաքսային Միություն տանող և Երևան՝ 2012 թվականի երկրորդ կեսից ի վեր իրենց այցելությունները հաճախակի դարձրած ռուսաստանյան «հավաքագրողները» բերում էին ևս մեկ «փաստարկ»՝ թե (ի՞նչ կա որ) Կալինինգրադի մարզը նույնպես ՌԴ-ի մյուս տարածքների հետ ընդհանուր սահման չունի... Մի կողմ թողնենք հարցի բարոյական կողմը՝ թե որքանով է կոռեկտ մի երկրի անկլավային հատվածը, որի առևտրատնտեսական և ցանկացած այլ ինտեգրվածությունը քննարկման առարկա դառնալ չի կարող, համեմատել ինքնիշխան պետության հետ, որը կոչված է օտարերկրյա գործընկերների հետ իր հարաբերությունները կառուցել՝ հիմնվելով նպատակահարմարության և իսլամատության վրա՝ որպես ազգային շահի բաղադրիչների: Սակայն այս «փաստարկը» որևէ քննադատության չի դիմանում նաև գուտ գործնական տեսանկյունից: Չէ՞ որ Կալինինգրադի մարզը Ռուսաստանի հետ չունի ՑԱՄԱՔԱՅԻՆ սահման, իսկ ծովով նրանք որևէ տրանզիտային երկրի կարիքը չունեն: Այլ կերպ ասած, նրանց միջև կա բեռնափոխադրման երթուղի, որը զերծ է մաքսային ընթացակարգերից: Մինչդեռ Հայաստանը այդ տարբերակն էլ չունի. հաղորդակցվել Ռուսաստանի հետ՝ շրջանցելով երրորդ երկրների մաքսակետերը, հնարավոր է միայն օդային ճանապարհով, ինչը չի կարող դիտվել որպես մեկ միասնական մաքսային տարածքի մասնակիցների միջև ապրանքաշրջանառության արդյունավետ միջոց:

Մաքսային Միություն մտելու ևս մեկ ակնառու խոչընդոտ է Հայաստանի անդամակցությունը Առևտրի համաշխարհային կազմակերպությանը: 2003 թվականի սկզբին, երբ Հայաստանը մտնում էր ԱՀԿ, պայմանավորվածություն ձեռք բերեց ցածր մաքսատուրքերի վերաբերյալ, ինչը համապատասխանում էր ակտիվ արտահանման-ներկրման կապեր ունեցող նրա

կարգավիճակին: Անդամակցումը Մաքսային Միությանը սկզբունքային հակասություններ է առաջացնում ԱՀԿ-ի նկատմամբ ստանձնած պարտավորությունների և ՄՄ-ի կողմից նախատեսվող զգալիորեն բարձր մաքսատուրքերի միջև: Ինչպես հայտնի է, Ռուսաստանը ԱՀԿ մտել է 2012-ին՝ ավելի ուշ, քան Հայաստանը, և ի սկզբանե պայմանավորվածություններ է ձեռք բերել այնպիսի սակագների վերաբերյալ, որոնք չեն հակասում Մաքսային միությունում արդեն գոյություն ունեցողներին: Ղազաստանը և Բելառուսն առայժմ ԱՀԿ անդամ չեն և եթե երբևէ անդամակցեն այդ կազմակերպությանը (Աստանան դրա շուրջ ակտիվորեն բանակցում է), նույնպես պետք է որպես հիմք ընդունեն ՄՄ-ում գործող սակագները:

Հայաստանի կառավարության անդամները լավատեսորեն հայտարարում էին այն մասին, որ իրենք պայմանավորվածություն ձեռք կբերեն ՄՄ շրջանակներում մաքսատուրքի ենթակա ապրանքների մեկ ու կես հազարանոց ցանկից ավելի քան 50 տոկոսի վերապահումների վերաբերյալ: Այս վերապահումների շուրջ բանակցությունները կոչված էին վերացնելու ԱՀԿ անդամության և Եվրասիական Տնտեսական միության միջև հակասությունները, սակայն, ինչպես պարզվեց, ԵՏՄ հավանական գործընկերները (այս տեսակետը հստակ արտահայտեց Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն) կտրականապես դեմ են նոր անդամների մուտքին Միություն առանձնահատուկ պայմաններով: Այլ կերպ ասած, եթե վերապահումներ չարվեն, ակնկալվում է, որ, ինչպես Եվրամիությունն էր ժամանակին վարվում նոր անդամների հարցում, ԵՏՄ-ն պետք է փոխհատուցի Հայաստանի ԱՀԿ գործընկերների՝ սակագների տարբերությունից բխող կորուստները: Սակայն ՌԴ փոխվարչապետ Իգոր Շուվալովի հայտարարություններից հասկանալի դարձավ, որ ոչ ոք չի պատրաստվում Հայաստանի փոխարեն վճարել, իսկ ինքը՝ Հայաստանը, ի գորու չէ փոխհատուցումների տակից դուրս գալ:

ՄՄ-ին Հայաստանի անդամակցելու վերաբերյալ քննարկումների սկզբից նեթ ակնհայտ էր, որ Աստանան և Մինսկը դրանում շահագրգռված չեն: Ի տարբերություն Մոսկվայի, նրանք գերադասում են Եվրասիական ինտեգրացիան դիտարկել զուտ տնտեսական համատեքստում, մինչդեռ Հայաստանի անդամակցությունը գլխավորապես քաղաքական իմաստ ունի: Վերջինիս ներկայությունը ԵՏՄ-ում, նկատի ունենալով Մոսկվայից նրա կախվածությունը, կնշանակեր նաև համատեղ որոշումների կայացման հարցում Ռուսաստանի դիրքերի էլ ավելի ամրապնդում: Հետևաբար Ղազախստանը և Բելառուսը, որոնց առանց այդ էլ չի գոհացնում Ռուսաստանի գերիշխող դիրքը, հնարավոր է որ մշակել են «եռյակին» Երևանի միանալուն հաջորդաբար խոչընդոտելու ռազմավարություն: Եթե Լուկաշենկոն բարձրացրեց առանձնահատուկ պայմանների բացառման հարցը, ապա Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաևը հանդես եկավ ինտեգրացիոն ցանկացած նախագծից Հայաստանին մեկուսացնելու քաղաքականություն վարող Ադրբեջանի շահերի պաշտպանի դերում: Գաղտնիք չէ, որ և Աստանայի, և Մինսկի համար Բաքուն շատ ավելի կարևոր գործընկեր է, քան Երևանը: Հայաստանի արտաքին առևտրում այս երկու երկրների բաժինը միասին վերցրած 1 տոկոսի էլ չի հասնում: Միննույն ժամանակ Ղազախստանը Ադրբեջանի հետ համագործակցում է միջազգային մի շարք խոշոր նախագծերի շրջանակներում՝ ներառյալ էներգետիկայի և գյուղատնտեսության ոլորտները: Բացի այդ, երկու երկրներն էլ անդամակցում են Իսլամական համաժողով կազմակերպությանը, որտեղ, որպես կանոն, հանդես են գալիս միասնական դիրքերից: Բելառուսի համար հսկայական նշանակություն ունեն Ադրբեջանի կողմից ժամանակ առ ժամանակ տրամադրվող էժան վարկերը: Այս ամենը հաշվի առնելով կարելի է չկասկածել,

որ ՄՄ երեք երկրներից այս երկուսը ամեն կերպ կընդդիմանան Հայաստանի անդամակցությանը:

Անշուշտ Մոսկվան բավարար կշիռ ունի՝ նոր անդամի հարցն իր համար ընդունելի պայմաններով անցկացնելու համար: Բայց 2013 թվականի սեպտեմբերի 3-ից առաջ էլ, հետո էլ հոգուտ Եվրասիական ինտեգրման Հայաստանի ընտրությունը նշանակալից էր ոչ այնքան ինքնին, որքան որպես 2013 թվականի նոյեմբերին Վիլնյուսի գագաթնաժողովում Արևելյան գործընկերության հաղթարշավը և առաջին հերթին՝ Ուկրաինայի կողմից Ասոցացման համաձայնագրի ստորագրումը խոչընդոտելու գործոն: Ճիշտ այնքանով, որքանով ինքը լուծում էր (կամ չէր լուծում) այս խնդիրը, Մաքսային միությանը և հետագայում ԵՏՄ-ին Հայաստանի անդամակցության հարցը Ռուսաստանի համար կորցնում է իր արդիականությունը: Եվ ոչ մեկի համար անակնկալ չպետք է լինի, որ Աստանայի և Մինսկի դիմադրությունը հաղթահարելու նկատմամբ Մոսկվայի շահագրգռվածությունը մարում է:

Մաքսային միությանը Հայաստանի միանալուն խոչընդոտող (կամ դրա աննպատակահարմարությունը հաստատող) գործոնների շարքում, բացի նրանցից, որ ի սկզբանե պարզ երեւում էին, ավելի ուշ՝ 2014-ի ապրիլ-մայիսին ի հայտ եկան նաեւ քողարկված խոչընդոտներ: Թեեւ, դրանց մեծ մասը միայն պայմանականորեն կարելի է քողարկված կոչել: Տիպ «անակնկալները», բացառապէս, իրավիճակի սխալ գնահատման եւ, համապատասխանաբար, ոչ ճիշտ կանխատեսումների հետեւանք էին: Բոլոր նրանք, ովքեր չէին սպասում, որ ՄՄ/ԵՏՄ անդամակցության ճանապարհին Հայաստանը կկանգնի գործնականում անլուծելի խնդիրների առջեւ, ինչպէս երեւում է, չէին պատկերացնում, որ Վրաստանը, Մոլդովան եւ Ուկրաինան մինչեւ վերջ կանցնեն Եվրամիության հետ Ասոցացման համաձայնագրերի ուղին: Չէ՞ որ եթէ նրանք (կամ գոնե միայն Ուկրաինան), իրենց կողմնորոշումը Երեւանի պէս փոխէին եվրասիական ինտեգրման օգտին, ԵՄ/ԵՏՄ ծրագիրը (իմա՝ ՄՍՀՄ 2.0) բավական հեռանկարային տեսք կունենար՝ «տեխնիկական» խոչընդոտներն անտեսելու համար:

«Ռուսական գարնան» չկայացած հաղթարշավի պարագայում, առանձին վերցրած Հայաստանի հանդէպ հետաքրքրությունը՝ իր արտաքին առեւտրի լիբերալ ռեժիմով (Առեւտրի համաշխարհային կազմակերպության անդամությամբ պայմանավորված) եւ Մաքսային միության երկրների հետ ընդհանուր սահմանի բացակայությամբ (տե՛ս նախորդ վերլուծական հոդվածները), ոչ այնքան գրավիչ շուկայով եւ տկար տնտեսությամբ, կտրուկ նվազեց՝ տեղը զիջելով խանգարող այն նույն «քողարկված» գործոններին: Ու, ինչպէս եւ սպասվում էր, Երեւանի անդամակցության դեմ ներդաշնակորեն գործեց Աստանա-Մինսկ տանդեմը: 2014 -ի ապրիլի վերջին Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն բավական կոշտ կերպով բարձրաձայնեց այն սկզբունքը, որ Եվրասիական միության ձեւավորման հարցում շտապել պետք չէ, եւ եթէ ինչ-որ մեկը պատրաստ չէ «փաթեթով» ընդունել նրա բոլոր պայմանները, համաձայնագրի ստորագրումը կարելի է հետաձգել: Դա գործնականում նշանակում էր, որ Մոսկվայի հետ նոր մաքսատուրքերի ենթակա ապրանքների ցուցակից զգալի բացառություններ ստանալու շուրջ Երեւանի բանակցությունները սոսկ ժամանակի անիմաստ վատնում էին: Իսկ մայիսի վերջին, հղում անելով իր ադրբեջանցի գործընկեր Բլիամ Ալիեւի նամակին, Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւը «հստակություն մտցրեց» առ այն, որ Հայաստանը ԵՏՄ կարող է մտնել միմիայն միջազգայնորեն ճանաչված սահմաններով: Դա գործնականում նշանակում է, որ Լեոնային Ղարաբաղի հետ Հայաստանի Հանրապետության սահմանին պետք է մաքսակետ գործի: Ըստ որում, Նազարբաեւն այդ հանգամանքը ներկայացրեց իբրեւ ինքնին հասկանալի, քանզի հենց այդ նույն պայմաններով է Երեւանը մտել Առեւտրի համաշխարհային կազմակերպություն (ԱՀԿ)...

Եվրասիական տնտեսական միության այդ նիստին ներկա գտնվողներից որեւէ մեկը, այդ թվում նաեւ հայկական պատվիրակությունը՝ երկրի ղեկավարի գլխավորությամբ, չառարկեց, չասաց, թէ նման զուգահեռները տեղին չեն, քանի որ ո՛չ ԱՀԿ-ում, ո՛չ էլ Ասոցացման համաձայնագրի ստորագրման դեպքում ԼՂՀ-ի եւ Հայաստանի միջեւ ապրանքաշրջանառության հատուկ կարգ սահմանելու հարց որեւէ մեկի կողմից չի դրվել: Ավելին, Ասոցացման համաձայնագրի շուրջ

բանակցությունների շրջանակում (ինչպես եւ դրանից առաջ ԱՀԿ-ի դեպքում) կողմերն ըմբռնումով են մոտեցել չլուծված հակամարտության իրավիճակում Ղարաբաղի բնակչության նորմալ կենսագործունեության համար Հայաստանի հետ կապերի անհրաժեշտությանը եւ շրջանցել են արհեստական սահմանափակումներ դնելու թեման: Թե՛ այդ, թե՛ մնացած բոլոր հարցերում եվրասիական բանակցային գործընթացը Երեւանն ընկղմել է «գործընկերային» հարաբերությունների որակապես տարբերվող մշակույթի մեջ, որտեղ ոչ ոք չի պատրաստվում իրենից թույլի հետ հաշվի նստել:

ԵՄ/ԵՏՄ ամբողջական ձեւաչափով իր համար ստորացուցիչ բոլոր քննարկումներում հայկական կողմի հայեցողական պահվածքը կարելի է բացատրել նաեւ այն ակնկալիքով, որ Մոսկվան իր անթաքույց սպառնալիքներով (գազի գներ, Ադրբեջանին հարձակողական զինտեխնիկայի վաճառք եւ այլն) Հայաստանն իր ինտեգրացիոն ծրագրերի մեջ ներքաշելով, հենց ինքն էլ լեզու կգտնի ԵՏՄ մյուս մասնակիցների՝ Աստանայի ու Մինսկի հետ: Կարելի է չկասկածել, որ Ուկրաինայի նկատմամբ իր «խիստ բնավորությունը» ցուցադրելով՝ Կրեմլը կարող է իր մաքսային գործընկերներին համոզել՝ Հայաստանին այդ միության մեջ ընդունել ցանկացած պայմանով: «Բռունցքով սեղանին խփելու» մեթոդը նրա կատարմամբ վաղուց այնքան արդյունավետ չէր գործել, որքան վերջին ամիսներին: Մակայն, ինչպես պարզվեց, ռուսական ղեկավարները նույնպես չեն այրվում Երեւանի ԵՏՄ անդամակցությունը ժամ առաջ կյանքի կոչելու ցանկությամբ: Իր գործելակերպով Մոսկվան սուսկ հաստատեց ակնհայտը. նրա նպատակը ոչ թե Հայաստանի հաշվին եվրասիական ձեւաչափն ընդլայնելն էր, այլ՝ Ասոցացման համաձայնագրի ձախողումը:

Որեւէ կասկած չի մնում նաեւ, որ «եվրասիացիները» Հայաստանն իրենց շարքերն ընդունելը ձգտում են դիտարկել Ադրբեջանի հետ համագործակցության լույսի ներքո, իսկ վերջինս էլ իր հերթին հետեւողականորեն իրականացնում է միջազգային եւ տարածաշրջանային բոլոր նախաձեռնություններից Երեւանի մեկուսացման քաղաքականությունը: Ընդամին, եվրասիական գործընթացում Բաքվի մասնակցությունը սկզբի համար կարող է լինել մասնակի, ասենք, համաձայնեցված քաղաքականության իրականացում էներգառեսուրսների ոլորտում, որը շարունակում է մնալ որպես Կրեմլի գլխավոր փաստարկ՝ Արեւմուտքի հետ իր խորացող դիմակայության մեջ: Եվրասիական ինտեգրացիոն նախագծում Հայաստանի, Ղրղզստանի կամ Տաջիկստանի նման պրոբլեմային երկրների ներգրավումը Ռուսաստանի համար շատ ավելի պակաս կարեւոր է, քան էներգետիկ խաղում Իրանին եւ Ադրբեջանին իր կողմը գրավելը: Թեհրանի համար դա յուրատեսակ ռեւանջի հնարավորություն կարող է լինել Արեւմուտքի կողմից կիրառվող երկարամյա պատժամիջոցների դիմաց, իսկ Բաքվի համար՝ ժողովրդավարության եւ մարդու իրավունքների հարցերում միջազգային հանրության նյարդայնացնող ճնշումը թուլացնելու միջոց: Ըստ որում, անմիջական հարեւան հանդիսացող Թուրքիան, ելնելով վերջինիս սեփական աշխարհաքաղաքական բարդ հաշվարկներից եւ արտաքին աշխարհի հետ հարաբերությունների հարցում իր այսօրվա առաջնորդի ոչ միանշանակ մոտեցումները, այս խաղում ավելի շուտ կարող է հանդես գալ աջակցի, քան՝ ընդդիմախոսի դերում: Առավել եւս, որ առնվազն Բաքուն, իսկ որոշակի հարցերում նաեւ Անկարան, գիտեն, թե համագործակցության դիմաց որպես պարզեւատրություն ինչ կարող են ակնկալել Մոսկվայից:

Այսօրինակ համատեքստում եվրասիականության օգտին ընտրության եւ անբարեհաճ հարեւանների հետ պրոբլեմների դեպքում Ռուսաստանին, ներառյալ ՀԱՊԿ-ը, որպես

անվերապահ գինակիցներին ապավինելու միջեւ կապ տեսնելը, միանգամայն անհիմն էր: Ներկայիս իրավիճակում դարաբաղյան կարգավորման հարցում խաղաղ կյանքի եւ ազգային շահերի պահպանման երաշխիքներ Հայաստանին ոչ ոք չի կարող տալ: Երկրի անվտանգության հետ կապված ռիսկեր եվրասիական եւ եվրոպական ինտեգրման միջեւ ընտրություն կատարելուց առաջ էլ կային: Եվրամիության հետ Ասոցացման համաձայնագրի ստորագրելու դեպքում դրանք, բնականաբար, կարճաժամկետ հեռանկարում չէին պակասելու: Եվ միայն պարզունակ ու անհեռատես հաշվարկները կարող են հիմքեր տալ եզրակացնելու, որ եվրահինտեգրումից հրաժարվելը եւ Մաքսային միության դռները մաշելը այդ ռիսկերը նվազեցնելու ավելի ապահով ճանապարհ են: Իրադարձությունների հետագա զարգացումներն անվերապահորեն դա հաստատեցին:

Մինչդեռ, ԵՄ-Հայաստան Ասոցացման համաձայնագրի այն տարբերակը, որին կողմերը հանգել էին բանակցությունների ընթացքում, եւ որն անմիջականորեն չէր պայմանավորում պետական եւ սոցիալ-տնտեսական մոդելի, քաղաքակիրթ զարգացման վեկտորի ընտրությունը անվտանգության համակարգի փոփոխությամբ եւ ռազմավարական գործընկերոճից հրաժարմամբ, միակ կենսունակ տարբերակն էր Հայաստանի համար: Մերժելով այն, երկրի ղեկավարությունը բախվեց ինչպես ի սկզբանե երեւացող, այնպես էլ սրընթաց հորձանքով ի հայտ եկած քողարկված պրոբլեմների հետ: Դրանք ազդեցին բոլոր ոլորտների վրա՝ ներքին եւ արտաքին քաղաքականություն, էկոնոմիկա, հանրային կյանք եւ, ըստ էության, անվտանգություն: Վերջին ամիսների փորձառությունը հաստատում է, որ ճգնաժամային ախտանշանները կշարունակեն կուտակվել այնքան ժամանակ, քանի դեռ Եվրասիական միությանն անդամակցությունը կմնա երկրի համար այլընտրանք չունեցող հեռանկար: Այս առումով նոր մարտահրավեր է Ռուսաստանի նկատմամբ Արեւմուտքի պատժամիջոցների կիրառումը: Բայց դա թեմա է արդեն հաջորդ հոդվածների համար:

**ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ՝
ՈՐՊԵՍ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ**

Մեպտեմբեր 2014

Պատժամիջոցների պատերազմը՝ մի կողմից Եվրամիության, ԱՄՆ-ի եւ մի շարք այլ երկրների, մյուս կողմից՝ Ռուսաստանի միջեւ, բնականաբար, առնչվում է ամբողջ համաշխարհային շուկային, այդ թվում անմիջականորեն այս պատերազմին չմասնակցող պետություններին: Ուզեն թե չուզեն: Հայաստանը, որպես Եվրամիության հետ Ասոցացման համաձայնագրի եւ Եվրասիական տնտեսական միության կեսձանապարհին իր ընթացքն արգելակած երկիր, որ ավանդաբար արտահանման-ներկրման կախվածության մեջ է, այս իրավիճակին առանձնակի զգայունությամբ է արձագանքում: Ըստ որում, որոշ հետեւանքներ կարող են նրա համար երկակի ազդեցություն ունենալ՝ ինչպես դրական, այնպես էլ՝ բացասական:

Պատժամիջոցներ կիրառող երկրներից դեպի Ռուսաստան պարենային ապրանքների ներկրման արգելանքից անմիջապես հետո խոսակցություններ բացվեցին հայ արտադրողների համար հեռանկարներ բացվելու մասին: Մասնավորապես, որոշակի հնարավորություն կարող էր ընձեռել պտուղ-բանջարեղենի, մսամթերքի, ձկնեղենի ու պանրի պակասը ռուսաստանյան սպառողական շուկայում: Այս երեւոյթի դրական կողմերի մասին խոսելն ավելորդ է, դրանք ակնհայտ են: Սակայն թեթեւամտություն կլիներ չնկատել դրա հետ կապված պրոբլեմները, թեկուզեւ դրանք նվազագույնի հասցնելու նպատակով: Բացասական ազդեցություններից առաջինը, որ անմիջապես ի հայտ է գալու, ներքին շուկայում գների բարձրացումն է, որ բնականաբար կուղեկցի պահանջարկի ավելացմանը (ընդամին, Ռուսաստանի սպառողական շուկայի տարողունակությունը Հայաստանի արտադրական հնարավորությունների համեմատ կարող է անսահմանափակ լինել): Նման խնդրի առջեւ մենք կանգնել ենք Իրանում եւ արաբական երկրներում՝ հայկական ոչխարի մսի նկատմամբ ծագած հետաքրքրության առիթով. գինն այնքան էր բարձրացել, որ հենց Հայաստանում այդ արտադրանքն անհասանելի էր դարձել բնակչության մեծ մասի համար: Ավելի թարմ օրինակ է Բելառուսը, որտեղ բնակչությունն արդեն բախվել է մի շարք ապրանքներ ռուսաստանյան սպառողներին վերահասցեագրելու արդյունքում առաջացած գնաճին:

Առարկությունները, թե հենց դրանում է կայանում շուկայական տնտեսության իմաստը՝ արտադրել՝ եկամուտ ստանալու համար եւ վաստակած եկամուտով բավարարել սեփական կարիքները, այս դեպքում այնքան էլ կոռեկտ չեն: Զուտ շուկայական բանաձեւերը լավ են աշխատում, երբ սուբյեկտների միջեւ հարաբերությունները քիչ թե շատ հարթեցված են լինում: Տվյալ դեպքում, սակայն, մենք կանգնում ենք շուկային իրավիճակում հայտնվելու վտանգի առաջ՝ կապված գլոբալ ճգնաժամով պայմանավորված գործընթացների հետ, երբ շուկայի փոքր սուբյեկտ հանդիսացող հայաստանյան սպառողի շահերը կարող են պարզապես ճնշվել հզոր եղբայրակցի՝ ռուսաստանյան սպառողի կողմից: Բնականաբար, հայկական բիզնես-ընկերակցության մի նեղ խմբի համար մուտքը ռուսաստանյան շուկա գերշահույթներ կապահովի, սակայն մեր տնտեսությանը բնորոշ՝ սեփականության կենտրոնացումը եւ մենաշնորհայնությունը թույլ չեն տալիս ակնկալել, որ բարիքը կբաշխվի բնակչության լայն շերտերի միջեւ: Պետք չէ նաեւ ակնկալել աշխատատեղերի էական ավելացում, քանի որ այն ոլորտները, որոնք ՌԴ շուկայի հաշվին ակտիվացման ներուժ ունեն, լրացուցիչ աշխատողների

ավելի մեծ բանակի կարիք չունեն: Համապատասխանաբար, գների աճը դժվար թե ուղեկցվի սպառողների գնողունակության համարժեք բարձրացմամբ: Սոցիալական պրոբլեմները, թերեւս, կարվեն, իսկ թե դա ինչպես կանդրադառնա արտագաղթի վրա, մեզ քաջ ծանոթ է անցյալ տարիների փորձից...

Եվս մեկ հնարավոր կողմնակի ազդեցություն՝ բնապահպանական: Դեռեւս ռուսաստանյան շուկա թափանցելու նոր հնարավորություններից առաջ, հայ բնապահպանները, ոչ առանց հիմքերի, ահագանգ էին հնչեցնում՝ երկրի ջրային ռեսուրսներն ի շահ ձկնարդյունաբերական տնտեսությունների անխնա կերպով օգտագործելու կապակցությամբ: Իրական վտանգներ են ծագել Հայաստանի կենսապահովման համար թերեւս կարեւորագույն ռեսուրսների՝ Մեւանա լճի եւ Արարատյան դաշտավայրի համար (արտեզյան ջրերի գերածախսը հղի է անդառնալի հետեւանքներով): Հայկական ձկնարդյունաբերական արտադրանքն առանց այդ էլ իր տեղը նվաճել է Ռուսաստանի շուկայում: Իսկ պատասխան պատժամիջոցների սահմանմամբ եւ, ասենք, բազմաթիվ ռուսաստանցիների առօրյա ճաշացանկի մաս կազմող նորվեգական սաղմոնին փոխարինող գտնելու հրատապ պահանջով պայմանավորված՝ մեր դեղիկատեսների պահանջարկը կարող է պարզապես աժեռտաժային լինել՝ դրանից բխող բնապահպանական բոլոր հետեւանքներով:

Վերը ասվածը, բնականաբար, չի նշանակում, որ հայրենական բիզնեսը չպետք է իր շահերին համապատասխան կերպով արձագանքի տարածաշրջանի շուկայական փոփոխված իրավիճակին: Ընդհակառակը, եվրասիական ինտեգրման ընտրության առիթով մտահոգությունները կապված են հենց այն բանի հետ, որ երկիրը չնմանվի Հյուսիսային Կորեային, այլ, որքան հնարավոր է, հեռանա այդ մոդելից: Սակայն թվարկվածներով չսահմանափակվող շուկային մարտահրավերները ենթադրում են այն պետական ինստիտուտների բարձր պատասխանատվությունը, որոնք իրականացնում են սոցիալական ապահովության եւ գնագոյացման, ազատ մրցակցության եւ կոռուպցիայի դեմ պայքարի, բնական ռեսուրսների պաշտպանության եւ կայուն զարգացման ոլորտների քաղաքականությունը: Նույնիսկ առանց ահագնացող աշխարհաքաղաքական եւ գլոբալ տնտեսական ճգնաժամի էլ Հայաստանի Հանրապետության համապատասխան պաշտոնական մարմինները պատշաճ բարձրության վրա չէին: Նրանց հետագա նվազ արդյունավետ աշխատանքը, հանրության առջեւ հաշվետվողականության ցածր մակարդակը, ազատ ԶԼՄ-ների եւ քաղաքացիական նախաձեռնությունների քննադատության նկատմամբ իմունիտետը կարող են բիզնեսի ոլորտում բացվող հնարավորությունները ընդհանուր առմամբ երկրի համար կործանարար դարձնել:

Հիմա շատ է խոսվում պատասխան արգելանքների տակ ընկած ապրանքները քողարկված կերպով Ռուսաստան վերաարտահանելու եւ պատժամիջոցների պատերազմին չմասնակցող՝ Մոսկվայի հավատարիմ գործընկերների համար ստեղծված հնարավորությունների եւ դրանցով օգուտներ շահելու մասին: Սովորական են դարձել «բելառուսական ծովախեցգետնի» կամ «ղազախական պարմեզանի» մասին կատակները եւ միանգամայն լուրջ բիզնես պլանների մասին խոսակցությունները: Խոսքը կարող է լինել հարյուրավոր մանր եւ միջին ձեռնարկությունների մասին, որոնք կզբաղվեն Ռուսաստանի համար արեւմտյան երկրների ապրանքների վերամշակմամբ եւ անգամ, պարզապես, վերափաթեթավորմամբ: Ըստ որում, չի բացառվում, որ դա տեղի կունենա փոխադարձ համաձայնությամբ. արեւմտյան արտադրողները, գոնե մասամբ, կպահպանեն սպառման շուկան, իսկ Մոսկվան՝ «ֆաստը

պահելու» հետ միաժամանակ, իր քաղաքացիներին չի գրկի ապրանքների սովորական տեսականուց: Հայաստանի շանսերն այս կոմբինացիաներում, ամենայն հավանականությամբ, մեծ չեն: Հատկապես Եվրասիական տնտեսական միության հիմնադիր երկրների, որոնք ազատված են մաքսային ձեռնարկություններից, ինչպես նաև Չինաստանի եւ Թուրքիայի համեմատությամբ, որոնք Ռուսաստանի հետ ունեն ապրանքաշրջանառության հսկայական ծավալներ եւ, համապատասխանաբար, լոգիստիկայի փորձարկված մեխանիզմներ: Նույնիսկ Վրաստանը, որը թեեւ ստորագրել է Եվրամիության հետ Ասոցացման համաձայնագիրը, սակայն տնտեսական համագործակցության ուղղությամբ ակտիվորեն աշխատում է ՌԴ-ի հետ, Հայաստանի նկատմամբ որոշակի առավելություններ ունի. առաջին հերթին՝ աշխարհագրական մոտիկությամբ, ընդհանուր սահմանի առկայությամբ եւ ավելի ցածր տրանսպորտային ծախսերի շնորհիվ:

Որքան էլ տարօրինակ է, մրցակցող ինտեգրացիոն նախաձեռնությունների, ազատ առևտրի գոտիների, մաքսային միությունների ու նաև պատժամիջոցների առկայությունը որոշակի իմաստով խթանում է տարբեր համակարգերի մեջ մտնող առանձին երկրների միջև համագործակցությունը: Փոխադարձ ներդրումների եւ քույր ձեռնարկությունների կիրառումը թույլ կտա օգտվել թե՛ այս, թե՛ այն համակարգի մատչելի առևտրատնտեսական բարենպաստ ռեժիմներից: Պատահական չէ, որ հայաստանյան կառավարական շրջանակներում մոդայիկ են դարձել խոսակցությունները ԵՏՄ անդամակցությանը հավակնող Հայաստանի եւ Եվրամիության հետ ազատ առևտրի համաձայնագիր կնքած Վրաստանի միջև այս կարգի համագործակցության հեռանկարների մասին: Մոտավորապես հենց այսպիսի սխեմաների մասին են մտորում «մեծ կոմբինատորները»՝ ռուսաստանյան ձեռնարկությունների դեմ կիրառվող պատժամիջոցների համատեքստում: Առավել էս, որ ռուսաստանյան ձեռնարկություններն ակտիվորեն գործում են Հայաստանում, իսկ հայաստանյան բանկերում ռուսական կապիտալը մեծ մասնակցություն ունի: Ճիշտ է, այս դեպքում ռիսկերը բավական մեծ են, եւ Երեւանի արեւմտյան գործընկերները, ամենայն հավանականությամբ, իրենց ուշադրության ներքո կպահեն Մոսկվայի նկատմամբ պատժամիջոցների ռեժիմը շրջանցելու հնարավոր ուղիները եւ համապատասխան միջոցներ կձեռնարկեն: Այս կապակցությամբ ոչ երկիմաստ նախագաղափարում արդեն իսկ եղել է:

Շատ ավելի բարդ է ֆինանսավարկային գործարքների սահմանափակումները շրջանցելու կամ երրորդ երկրների միջոցով Արեւմուտքում ռուսաստանյան ապրանքներն իրացնելու շուրջ փոխադարձ լռելյայն համաձայնության գալը, քան՝ հակառակ ուղղության պարագայում: Այն ըմբռնումը, որով ԱՄՆ-ում եւ Եվրոպայում վերաբերվում էին հայ-իրանական առևտրային կապերին, որպես մեր երկրի համար գոյատևման միջոցի, պատժամիջոցների ներքո հայտնված Ռուսաստանի հետ Երեւանի կասկածելի համագործակցության վրա կարող է եւ չտարածվել: Ակնհայտ հետեւանքներից մեկն, օրինակ, կարող է լինել Եվրամիության կողմից գործնականում ազատ առևտրին մոտ GSP+ ռեժիմը չերկարաձգելը:

Մի խոսքով, ՀՀ իշխանությունների սովորույթը՝ «լողալ հոսանքին համընթաց» եւ ձեւ անել, թե ճգնաժամային իրավիճակները երկրի կողքով են անցնում, ներկա պայմաններում երկրի վրա կարող են շատ ավելի ծանր անդրադառնալ, քան հնգամյա վաղեմության գլոբալ տնտեսական ճգնաժամը: Այդ պատճառով անհրաժեշտ է մշակել գործողությունների կոնկրետ ծրագիր ծավալվող իրավիճակի բոլոր ասպեկտներով, եւ ոչ թե փրկարար հրաշքների հույս փայփայել:

P.S. Իսկ ահա պատժամիջոցների համատեքստում խոսել ռուսաստանյան խոշոր ներարկումների մասին՝ նույնիսկ ԵՏՄ-ին պետության անդամակցության դեպքում, ընդհանրապես իմաստ չունի: Նավթա-գազային եւ էներգետիկ ձեռնարկությունների, ինչպես նաեւ՝ ՌԴ ամբողջ հումքային սեկտորի կորուստներն այնքան կանխատեսելի են, որ պետք է մոռանալ Հայաստանում նրանց բոլոր ներդրումային ծրագրերի մասին: Իսկ սպասել կարելի է միայն այլ ճակատներում իրենց կորուստները փոխհատուցելու հերթական փորձերին՝ գործընկեր երկրից վերջին հյուսիսը քամելու գնով: Այնպես որ, գների, մասնավորապես՝ գազի եւ էլեկտրաէներգիայի, վերջին բարձրացումները ամենեւին էլ վերջինները չեին...

ԴԻՄԱԿՆԵՐ ՊԱՏՌԵԼՈՒԻ ԺԱՄԱՆԱԿԸ.

ՓՆՏՐԿՈՒՄ ԵՆ ԻՐԱԿԱՆ ԴԵՄՔԵՐ

Հոկտեմբեր 2014

Ուկրաինայի և ընդհանրապես Ռուսաստան-Արևմուտք հարաբերությունների շուրջ այսօրվա զարգացումները միայն երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, թվում էր, վերջնականապես հաստատված միջազգային հարաբերությունների հիմքերը չէ, որ խարխլում են: Դրանք բերում են մարդկության այն հատվածի՝ արժեքների, նպատակների և նախապատվությունների մասին պատկերացումների վերաիմաստավորման ու փոփոխման, որն իրեն ավանդաբար համարում է եվրոպական քաղաքակրթության կրողը: Եվ հետևաբար խոցելի և կասկածելի են դարձնում զարգացման, համագործակցության շատ ծրագրեր, դրանց բովանդակությունը, միմյանց հանդեպ հանձնառությունների կատարման առումով գործընկերների հետևողականությունը և պատասխանատվությունը: Որքան էլ ցավալի է, ասվածը վերաբերում է նաև եվրաինտեգրման գործընթացներին, այդ թվում՝ ԵՄ «Արևելյան գործընկերություն» նախաձեռնության օրակարգին:

Այնպես չէ, որ մինչև ուկրաինական ճգնաժամը միջազգային համաձայնագրերն անվերապահորեն էին կատարվում, իսկ բոլոր նրանք, ովքեր հայտարարում էին Եվրոպայում իրենց ապագայի տեսլականի մասին, համոզված և անշեղորեն գնում էին համաձայնեցված բարեփոխումների ճանապարհով: Սակայն սկզբունքներից հետ կանգնելը տեղի էր ունենում դեմքի ամոթխած արտահայտությամբ և ուղեկցվում՝ կուրսն անշեղորեն պահելու մասին հավաստիացումներով, արդարացումներով և հղումներով՝ առաջընթացը դանդաղեցնող «մութ անցյալին»: Եվ միայն «հետմայրանական» շրջանում էր, որ մինչ այդ բոլորի կողմից ընդունված ստանդարտները և նորմերը ժխտելիս հատկապես լայն տարածում ստացան ցինիզմը և նույնիսկ հոխորտանքը: Պարզվեց, որ անգամ պետական ինքնիշխանության և միջազգային անվտանգության կարգի առանցքային հիմնահարցերի շուրջ երկկողմ և բազմակողմ համաձայնությունների տակ դրված բարձրաստիճան անձանց ստորագրություններն ու կնիքները շատերի համար ոչինչ չարժեն: Էլ ի՞նչ խոսք կարող է լինել հումանիտար ոլորտի՝ ժողովրդավարական ինստիտուտների կամ մարդու իրավունքների մասին:

«Նոր աշխարհակարգի» թերևս առաջին գոհը (և միաժամանակ՝ գործիքը) դարձան զանգվածային լրատվամիջոցները: Նորաձևությունն թելադրողներն այստեղ դարձան ռուսաստանյան առաջատար հեռուստաալիքները: Գրեթե երկու տասնամյակ շարունակ նրանք քայլում էին դեպի իրենց այսօրվա «տրիումֆը»: «Պերեստրոյկայի» ժամանակների ազատականացումից և ՌԴ ժողովրդավարական պետականության առաջին տարիներից հետո, ռուսաստանյան օլիգարխների առաջին սերունդը և «արևմտամետ» չինովնիկները, որոնք զավթել էին ՋԼՄ-ների նկատմամբ վերահսկողությունը, որոշեցին մեղիա ինդուստրիայում հրաժարվել իրենց իսկ հռչակված ազատ շուկայական սկզբունքներից: Դա արվեց որպես «իրենց նախագահին» աջակցություն, և գործի դրվեցին ձեռքի տակ եղած քարոզչական բոլոր կեղտոտ տեխնոլոգիաները: Այդպիսի զիջումը չէր կարող անհետևանք մնալ: Ընդունելով «խաղի կանոններ», ըստ որոնց հեռուստաընկերությունները, տպագիր պարբերականները և այլն, ազատ բիզնեսի սուբյեկտ չեն, այլ նախևառաջ՝ քաղաքական շահարկումների գործիք, և հետևաբար նրանց վրա չեն տարածվում մասնավոր սեփականության պաշտպանության

սկզբունքները, «արևմտամետ էլիտան» ստիպված էր հաշտվել առավել նշանակալից մեղիա ակտիվները նոր, արտաքուստ հավատարիմ սեփականատերերին փոխանցելու հետ: «Գազպրոմի»՝ ՀԿԵ-ի սեփականատեր դառնալու պատմությունը ժանրի դասական օրինակն է: Այս հեռուստաընկերության նախկին տիրոջ՝ Վլադիմիր Գուսինսկու պատմությունը դաս չճառայեց մեկ այլ օլիգարխ և մեղիա մագնատ Բորիս Բերեզովսկու համար: Վերջինս ֆինանսավորում էր հեռուստատեսային քիլերության ամենազգվելի հնարքները՝ իշխանությունը «իր» մի նախագահից մյուսին առանց խոչընդոտների փոխանցելը ապահովելու համար: Իրավիճակային զոհերի թվում հայտնվեցին ռուսաստանյան քաղաքականության այնպիսի հսկաներ, ինչպիսիք էին Մոսկվայի նախկին քաղաքապետ Յուրի Լուժկովը և ՌԴ նախկին վարչապետ Եվգենի Պրիմակովը:

Թե Գուսինսկին, թե Բերեզովսկին հաջողությամբ լուծում էին իրենց պետքական թեկնածուներին համապատասխանաբար 1996 և 2000 թվականներին գահին նստեցնելու քարոզարշավի շրջանակներում հանրային կարծիքը մանիպուլյացիաների ենթարկելու խնդիրը, ինչից հետո արդեն նրանք Ռուսաստանին այլևս պետք չէին: Իսկ նրանց երբեմնի սեփականությունը հանդիսացող գլխավոր մեղիա ռեսուրսները, ներառյալ հեռուստաալիքները և եթերային հերոսները, բարոյական անկման մի նոր աստիճանի բարձրացան (ներեցեք բառախաղի համար), հակաուկրաինական, հակաարևմտյան քարոզչության մեջ այսօր գերազանցելով խորհրդային նույնիսկ ամենախորշելի օրինակները:

1990-ական և 2000-ական թվականների սահմանագծին ռուսաստանյան ՁԼՄ-ների անցած ուղին և հասարակության տեղեկատվական «մշակման» հիմնական խողովակների մոնոպոլիզացիան իշխանության կողմից կրկնեցին նրանց եղբայրակիցները ԽՍՀՄ նախկին տարբեր երկրներում, այդ թվում՝ Հայաստանում: Սակայն քաղաքացիների զումբիացման հարցում մոսկովյան առաջատար հեռուստաալիքների վերջին «նվաճումները» մնում են անգերազանցելի: Բացահայտ ստի, ռասիզմի, շովինիզմի և այլատյացության տարածման այսպիսի արդյունավետությամբ քիչ թե շատ բաց հասարակություններում ոչ ոք չի կարող հպարտանալ: Իզուր չէ, որ սեփական քաղաքացիների պաշտպանության համար մի շարք երկրներում արգելել են կամ սահմանափակել են ռուսաստանյան որոշ հեռուստաընկերությունների վերահեռարձակումը: Հայաստանում, չնայած այս ալիքների ազատ հասանելիությանը և նրանց կողմից ազգային օրենսդրության կոպիտ խախտումներին, պատկան պետական մարմինները շրջանցում են այս հրատապ թեման:

Մինչդեռ, ի տարբերություն անցած տարիների, երբ Ռուսաստանում մանիպուլյացիոն տեխնոլոգիաների կիրառումն արդարացվում էր ազատ ժողովրդավարական պետության արևմտյան մոդել կառուցող և կոմունիստական ռևանշիզմի դեմ պայքարող էլիտայի շահերով, այսօր բոլոր դիմակները պատրված են: Ռուսաստանյան հեռուստաթերի աստղերը բացեիբաց ծաղրում են եվրոպական արժեքները, ստորացնում են ժողովրդներ, երկրներ և առանց ամաչելու պնդում են, որ ժուռնալիստիկան հենց այդպիսին էլ պետք է լինի: «Ժամանակակից մեղիայի դարաշրջանի» խորհրդանիշներից մեկը՝ Դմիտրի Կիսելյովը, Երևանում իր «տաղանդի» հայ երկրպագուներին խրատելիս, հասավ մինչև մասնագիտության և էթիկայի հիմքերի հիմքին՝ փաստերը մեկնաբանություններից և կարծիքներից տարանջատելու անհրաժեշտությամբ: Իբրև թե դա հնացած սկզբունք է... Այլ կերպ ասած, մերկ ինֆորմացիան, ըստ ռուսաստանյան քարոզչության «գուրուի», թույլատրելի է այն աստիճան խառնել դրա սուբյեկտիվ

վերարտադրության հետ, որ սպառողը կորցնի իրեն առաջարկված տեղեկատվական արտադրանքի փաստական հիմքը և կուրորեն հետևի ուղեվարին: Ինչն էլ, ըստ էության, տեղի է ունենում ռուսաստանյան ՁԼՄ-ների լսարանի հետ, այդ թվում, ցավոք, նաև Հայաստանում: «Զուբիարկիլի» այսօրինակ ազդեցության և հայկական քաղաքական վերնախավի եվրասիական նկրտումների համատեքստում անխուսափելի է թվում նաև վերջին 20 տարում մեր ՁԼՄ-ների ստացած իսկական պրոֆեսիոնալ ժուռնալիստիկայի դասերի իսպառ մոռացումը եւ հարումը մոսկովյան «խոսքի վարպետների» «տեսություններին»: Միակ հույսն այն է, որ ինչպես միշտ, դա տեղի կունենա սովորական գավառական մակարդակով, և հետեւաբար՝ առանց նույն ցնցող էֆեկտի...

Թե այդ պարագայում ինչպես կարելի է ազատվել հասարակության վրա ազդեցության այլընտրանքային աղբյուրներից, ակնառու կերպով ցուցադրում է խորհրդային անցյալի մեր մեկ այլ ուղեկիցը՝ Ադրբեջանը: Մոտավորապես հարյուր քաղաքական բանտարկյալ, այդ թվում լրագրողներ և բլոգերներ, մի երկրում, որտեղ առանց այդ էլ սեփական կարծիքը բացեփաց արտահայտել համարձակվողներն այնքան էլ շատ չեն: Համեմատաբար վերջերս այնտեղ չեղյալ էր հայտարարվում պաշտոնական գրաքննությունը, հանդուրժողական վերաբերմունք էր ցուցաբերվում ՁԼՄ-ներում տեղ գտած քննադատությունների նկատմամբ, թույլատրվում էր իրական բազմակուսակցականությունը, բացահայտորեն չէր խոչընդոտվում տեղական քաղաքացիական հասարակության հետ միջազգային կազմակերպությունների աշխատանքը, չէին պատժվում հայերի հետ երկխոսությանը մասնակիցները: Իսկ հիմա գրեթե բոլոր ՁԼՄ-ները հայտնվել են իշխանությունների խնամածության և վերահսկողության ներքո, ընդդիմադիր լինելը հավասարեցվում է հակապետական գործունեությանը, ՀԿ-ների ֆինանսավորումը արտասահմանյան հիմնադրամներից հնարավոր է միայն վերևների թույլտվությամբ, հայերի հետ շփումները բնորոշվում են որպես «լրտեսություն» և «պետական դավաճանություն»: Վերոհիշյալ հիմնախնդիրների կապակցությամբ միջազգային արձագանքին ադրբեջանական իշխանությունները վերջին ժամանակներս, անշուշտ զգալով համաշխարհային քաղաքական կլիմայի վերը նշված փոփոխությունները, հանդուգն պատասխան են տալիս՝ «ձեր գործին նայեք...»: Նշենք, որ խոսքը մի երկրի մասին է, որն, ինչպես և Հայաստանը, Եվրոպայի Խորհրդի անդամ է, ԵՄ «Արևելյան գործընկերություն» նախաձեռնության մասնակից: Ըստ որում չի բացառվում, որ հայաստանյան քաղաքական բարձր շրջանակներում նույնպես կան մարդիկ, ում դուր է գալիս իշխանության և քաղաքացիների հարաբերությունների այդօրինակ բնույթը...

Մույն թեմայի շրջանակներում արժեք խոսել նաև մեկ այլ հարևանի՝ Թուրքիայի մասին: Արդարացի չէր լինի նրան դնել վերոհիշյալ օրինակների հետ նույն շարքում: Բայց... Այստեղ էլ են (հատկապես վերջին ժամանակներս) սիրում երկրի հասցեին արված ցանկացած քննադատության համար «տեղը դնել» Արևմուտքին և նրան մեղադրել քայքայիչ գործունեության համար: Մի քանի ամիս առաջ Թուրքիայի իշխանությունները լրագրողին Ադրբեջան արտաքսեցին՝ հիանալի գիտակցելով, որ նա այդտեղ անմիջապես կձերբակալվի շինծու մեղադրանքներով: Երկրի քաղաքական առաջնորդներն իրենց թույլ են տալիս բացահայտ հայատյաց հայտարարություններ անել և ընտրություններում համոզիչ հաղթանակ են տանում: Մի կողմից բացահայտ կերպով խախտում են եվրոպական քաղաքակրթության հիմնարար սկզբունքներից մեկը՝ հանդիսացող աշխարհիկ պետության սահմանները, իսկ մյուս կողմից՝ նորաթուխ արտգործնախարարի բերանով հայտարարում են Եվրամիությանը անդամակցելու՝ երկրի արտաքին քաղաքականության առաջնահերթության մասին...

Եվ այս ամենը՝ աշխարհաքաղաքական լրջագույն հակամարտությունների, գլոբալ անվտանգության իրական սպառնալիքների և միջազգային իրավական հարաբերությունների խզման ֆոնին: Այսպիսին է այն միջավայրը, որտեղ շարունակվում է քննարկվել Հայաստանի և Եվրամիության համագործակցության օրակարգը: Այստեղ շարունակում են առաջնահերթությունը տալ արդարադատության համակարգի բարեփոխմանը, կոռուպցիայի դեմ պայքարին, մարդու իրավունքներին, ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդմանը՝ թեմաներ, որոնք առավել հրատապ մարտահրավերների առկայության պարագայում դուրս են մնացել ակտիվ դիսկուրսից: Իրավիճակը սթափ գնահատելու դեպքում ակնհայտ է դառնում, որ արտաքին ազդակներն ու գործոնները, որոնք նախկինում որոշիչ դեր են խաղացել բարեփոխումներն առաջ մղելու հարցում, այսօր առավել քան թույլ են: Բարեփոխումների իմիտացիան գնալով ավելի անիմաստ է դառնում: Իսկ հաշվի առնելով եվրասիական գործընթացը, որն արգելակվել է, սակայն բոլորովին էլ չեղյալ չի հայտարարվել, դրսի ազդեցությունը ունի նաև ընդգծված հակադիր վեկտոր: Կգտնվե՞ն արդյոք ներքին ռեսուրսներ առաջընթացի համար: Նոր իրավիճակում հենց երկրի ներսում բարեփոխումների կողմնակից ուժերը գիտակցո՞ւմ են արդյոք իրենց պատասխանատվությունը: Պատասխանը, թե ժամանակակից աշխարհում որն է Հայաստանի իրական դեմքը, պետք է տա 2014 թվականի աշունը:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄՊԱՍՈՒՄ Է ՌԵՖՈՐՄՆԵՐԻ

ՇԱՐՇԻՉ ՈՒՇԻ Ի ՀԱՅՏ ԳԱԼՈՒՆ

Նոյեմբեր 2014

Ամփոփելով Հայաստանի 2014թ. արդյունքները, կարելի է առանց չափազանցությունների առավել դրամատիկ իրադարձությունների ցուցակում ներառել երկրի ղեկավարության կողմից Եվրոպական միության և Հայաստանի միջև Ասոցացման համաձայնագիրը նախատորագրելուց փաստացի հրաժարվելը, ինչպես նաև՝ Ռուսաստանի գլխավորած Մաքսային միության (ՄՄ) «դռան առաջ» նրա անարդյունավետ հապաղումը: Արդեն ակնհայտ է, որ, այս տարի չդառնալով ՄՄ անդամ, Հայաստանը լավագույն դեպքում Եվրասիական Տնտեսական միություն կմտնի ոչ թե որպես հիմնադիր, այլ երկրորդական դերով, իսկ անհնարինությունը՝ միաժամանակ միանալ ԵՄ-ի հետ Ազատ առևտրի գոտուն և ԵԱՏՄ-ին, երկրի համար նշանակում է մեծապես նաև աշխարհաքաղաքական ընտրություն: «Կոմպլեմենտարիզմի» գաղափարը, որը երկար տարիներ դավանում էր Երևանը, դադարում է ընդունելի լինել առնվազն նրա գործընկերներից մեկի՝ Ռուսաստանի համար:

Կողմորոշման և զարգացման մոդելի ընտրությունը ամենաանմիջական կերպով շոշափում է նաև ժողովրդավարության, քաղաքացիական հասարակության ոլորտները: 2010-2013թթ. Հայաստանում ծավալված էր բավական ինտենսիվ քննարկում պետության և հասարակական, քաղաքացիական սեկտորի փոխհարաբերությունների, այդ փոխհարաբերությունների օրենսդրական կարգավորման հարցերի շուրջ: Մի կողմից՝ մշակվեց «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխությունների նախագիծը, Նախագահին առընթեր ստեղծվեց Հանրային խորհուրդը, որը ներկայացրեց քաղաքացիական հասարակության զարգացման ռազմավարությունը. այս բոլոր և մի շարք այլ նախաձեռնություններ ենթադրում էին քաղաքական իշխանության կողմից քաղաքացիական սեկտորի վերահսկողության ինստիտուցիոնալացման էական ուժեղացում: Այլ կերպ ասած, առաջ էր տարվում այն մոդելը, որն ընդունվել էր Ռուսաստանում և հետխորհրդային մի շարք այլ երկրներում: Մյուս կողմից, քաղաքացիական հասարակության այն հատվածը, որն իր գլխավոր առաքելությունը տեսնում էր անկախ քննադատության հնարավորության, տարբեր հարցերով այլընտրանքային դիրքորոշումների արտահայտման ու առաջընթացման մեջ, հայտարարեց, որ վերը նշված նախաձեռնությունները կտրականապես անընդունելի են:

2014թ., չնայած Եվրասիական վեկտորի ընտրությանը, հասարակական սեկտորի զարգացման երկու հայեցակարգերի միջև «ստատիկ հավասարակշռության» վիճակը պահպանվեց, սակայն որոշ միտումներ վկայում են անցանկալի ուղղությամբ հետագա զարգացման սպառնալիքի մասին: Եվրոպական միությունը, չնայած հավաստիացումներին, որ շարունակում է հայաստանյան քաղաքացիական հասարակության հետ սերտ շփումները, ՀՀ իշխանություններից՝ քաղաքացիական հասարակության հանդեպ բաց լինելու իր պահանջներն ակնհայտորեն թուլացրել է: Դա դրսևորվեց, մասնավորապես, նրանում, որ նվազեց որպես որոշումների կայացման մասնակցի և ԵՄ աջակցությամբ իրականացվող ռեֆորմների ընթացքի գնահատողի՝ ՀԿ-ների դերը: Հենց իրենք՝ ռեֆորմներն էլ Գործընկերության և համագործակցության Համաձայնագրի գործողության ժամկետի լրանալու և երկկողմանի նոր փաստաթղթի բացակայության պատճառով զրկվեցին էներգետիկայից և միջազգային

իրավական հիմքից: Հայաստանի իշխանությունները հնարավորություն ստացան վերադառնալու անկախ քաղաքացիական հասարակության հետ երկխոսության իմիտացիային (ներեցեք նույնաբանության համար՝ *հեղինակ*) և դրա այն հատվածի հետ փոխգործակցությանը, որը հեշտ կառավարվում է և «համոզվում»: Այն սպառնալիքը, որ հասարակական կազմակերպությունների մասին օրենսդրության մեջ ՀԿ-ների նկատմամբ պետական վերահսկողությունն ուժեղացնող դրույթներ կներառվեն, ավելի իրական է, քան 2013-ին:

Միննույն ժամանակ, Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմը, թեև փաստացի գրկվեց Արևելյան գործընկերության ողջ գործընթացի ինստիտուցիոնալացված մասնակցի կարգավիճակից և կառավարության հետ երկխոսության և ռադիկալ ժողովրդավարական փոփոխությունների ջատագովության արդյունավետ գործիք չդարձավ, ինչին համառորեն գնում էր նախորդ մեկ-երկու տարիներին, սակայն խուսափեց «գոնգոյացումից»: Առավել ռեֆորմիստական տրամադրվածություն ունեցող և պլատֆորմի աշխատանքին տոն հաղորդող ՀԿ-ների համար սովորական բան է դարձել դիմակայելը սկզբունքային փոփոխություններով ոչ շահագրգիռ իշխանություններին: Ավելին, ՀԱՊ-ն իր հայտարարություններում ազդարարեց, որ հրաժարվում է իշխանական կառույցներին դիտարկել որպես գլխավոր (եթե ոչ միակ) գործընկեր ռեֆորմների առաջխաղացման հարցում, ինչպես նաև՝ որ ընդհանուր օրակարգի առկայության դեպքում պատրաստ է համագործակցել բոլոր քաղաքական ուժերի, ոչ ֆորմալ քաղաքացիական նախաձեռնությունների հետ:

«Քաղաքացիական ակտիվիզմը» ինքնահաստատվեց որպես Հայաստանի ժամանակակից հասարակական կյանքի լուրջ ֆենոմեն: Սոցիալապես ակտիվ մարդիկ, հիմնականում կրթված երիտասարդությունը, սոցիալական ցանցերի և փողոցային ակցիաների միջոցով հանրային կարծիքի և նույնիսկ իշխանական կառույցների վարքագծի վրա բավական ուժեղ ազդեցություն են ձեռք բերել: Այս ֆենոմենի ի հայտ գալը և մեծ նշանակությունը պայմանավորված են առաջին հերթին, իշխանությունների լեգիտիմության ցածր մակարդակով, որը ցանկացած հանրային ակցիաների ժամանակ նրանց դարձնում է խոցելի, երկրորդ՝ մարդկանց հուզող հրատապ խնդիրներին դիմելու՝ ակտիվիստների օպերատիվությամբ, երրորդ՝ դեռևս 1980-ականների վերջին ծնունդ առած՝ բողոքի փողոցային ակցիաների ավանդական բարձր էֆեկտիվությունը, չորրորդ՝ բնակչության կողմից քաղաքական ընդդիմությանը աջակցելու թուլացումը, որի հետևանքով դժգոհ հասարակության ուշադրությունը թեքվում է դեպի ոչ ֆորմալ քաղաքացիական շարժումներ: Անշուշտ շատերը՝ ինչպես իշխանությունների, այնպես էլ տարբեր քաղաքական խմբավորումների ներկայացուցիչներ, փորձում են (և դեռ կշարունակեն այդ փորձերը) զանգվածային ակցիաների կապիտալն օգտագործել սեփական նպատակներով: Սակայն, ժամանակ առ ժամանակ ընկնելով նեղ քաղաքական շահերի մանիպուլյացիոն ազդեցության տակ, ոչ ֆորմալ ակտիվիստները դեռևս խուսափում են կոնֆորմիզմից և փորձերից՝ ներգրավվելու նրանց քաղաքական ուղեծիրներում: Ընդ որում ակնհայտ է, որ նրանց կուտակված կապիտալն արդեն չի տեղավորվում մեկանգամյա ակցիաների մարտավարության սահմաններում և վաղ թե ուշ պետք է ռեալիզացվի առավել ինստիտուցիոնալացված ձևերով: Տարբերակներից մեկն է՝ քաղաքացիական ակցիաների էներգիան միացնել եվրոպական կողմնորոշման՝ որպես ՀՀ պաշտոնական կուրսի այլընտրանքի օրակարգին: Երկրորդ տարբերակը՝ ոչ ֆորմալ ակտիվիզմի բազայի վրա ձևավորել «ձախ» շարժում, որը, չնայած

սոցիալական խոր հիմնախնդիրների առկայությանը, հետխորհրդային ողջ ժամանակաշրջանում, ըստ էության բացակայում էր Հայաստանի քաղաքական գունապնակից:

Վերը նկարագրվածի լույսի ներքո Հայաստանում բազմակուսակցության համակարգի ապագան տազնապահարույց է, ինչը դժվարացնում է քաղաքացիական հասարակության փոխգործակցությունը ոչ միայն իշխանության, այլ նաև՝ ընդդիմության հետ: Մի կողմից, խոշոր բիզնեսի լիակատար միաձուլումը իշխանությանը, մարդկանց նեղ խմբի մասնավոր շահերի կողմից «պետության գրավման» դասական տարբերակը, նյութական տեսանկյունից ընդդիմությանը գրկում է գոյության միջոցներից: Մյուս կողմից, ընդդիմադիր կուսակցությունների պարբերաբար դուրս մնալը հասարակական-քաղաքական գործընթացներից (որի գագաթնակետը գործող նախագահի հիմնական մրցակիցների կողմից 2013թ. ընտրություններին մասնակցելուց խուսափելն էր և եվրոպական ինտեգրման կուրսի փոփոխությանը հակադդեյու հարցում նույնիսկ եվրոպամետ կուսակցությունների պասիվությունը) հանրության մեջ ամրապնդեցին այն կարծիքը, որ կուսակցությունները գոյություն ունեն բացառապես իրենք իրենց և ոչ ամեննին՝ մարդկանց խնդիրների լուծման համար: Առավել ևս, որ հասարակությունը տեսնում է, թե ինչպես են ընդդիմադիր կուսակցությունները իրենց գոյությունը պահելու համար գնում ցանկացած ձևի համագործակցության օլիգարխայի, իսկ վերջին հաշվով՝ իշխանության հետ:

Այսօր Հայաստանում տեղի է ունենում այնպիսի նոր քաղաքական ուժերի ձևավորման մի ծույլ գործընթաց, որոնք հաշվարկում են օգտվել նախորդների սխալներից: Սակայն այս գործընթացը հասարակության մեջ առանձնապես ոգևորություն չի առաջացնում: Բացի դրանից, խաղի մասնակիցները ամեն ինչ անում են ցանկացած նոր քաղաքական նախաձեռնություն վարկաբեկելու համար: Թվում էր, թե «իշխանություն-փող-իշխանություն» (կամ «փող-իշխանություն-փող») համակարգը Հայաստանում ակնհայտորեն վտանգված չէ: «Պետության գրավումը» ապահովում է բոլոր պայմանները, որպեսզի մի ռեսուրսը հաջորդաբար փոխարկվի մյուսով՝ անկախ այդ գործընթացի նկատմամբ բնակչության վերաբերմունքից: Ադմինիստրատիվ ռեսուրսի օգտագործումը, ձայների գնումը, ընտրողների անտարբերությունը, Հայաստանում ընտրական գործընթացներից միջազգային հանրության ակնկալիքների ցածր մակարդակը ապահովում են համակարգի անխափան վերարտադրությունը: Դժգոհ բնակչության մեծ մասը որպես ելք տեսնում է ոչ թե ապստամբելը, այլ՝ բախտ գտնելը Հայաստանից դուրս:

Փոփոխությունների հույսերը գնալով ավելի շատ են կապվում քաղաքացիական հասարակության հետ՝ ինչպես ինստիտուցիոնալացված, այնպես էլ՝ ոչ ֆորմալ, առաջադեմ գործընթացներին ոչ թե նպաստելու, այլ դրանք գլխավորելու նրա վճռականության հետ: Այս կարգի գործընթացների համար արագ հասունանալուն և ուժերի կուտակմանը մեծապես նպաստում է տեղեկատվական տեսանկյունից Հայաստանի համեմատաբար բաց լինելը: Խոսքն առաջին հերթին սոցիալական ցանցերի և բազմաթիվ առցանց ՁԼՄ-ների մասին է: Չնայած համացանցային շատ նախագծեր կրում են մանիպուլյացիոն բնույթ և քաղաքականապես կողմնակալ են, կարելի է ասել, որ այստեղ գերիշխող է ազատության և առաջադիմության շունչը: ԵՄ-ի հետ ՀՀ իշխանությունների համագործակցության տարիներն իզուր չեն անցել. ոչ ռեպրեսիվ քաղաքականությունը ժողովրդավարական ինստիտուտների գործունեության հետ կապված մի շարք ոլորտներում, այդ թվում և համացանցում, բարենպաստ դաշտ է ապահովել

կարծիքների փոխանակման և գաղափարների մրցակցության համար: Դրա համար քաղաքացիական հասարակությունը ամեն ինչ ունի, բացի պատասխանատվությունն իր վրա վերցնելու պատրաստակամությունից. անշուշտ, օբյեկտիվ դիտորդ լինելը և տեղի ունեցող իրադարձությունները քննադատաբար գնահատելն ավելի հարմարավետ գործ է, քան մեծ խնդիրների լուծումն իր վրա վերցնելը: Սակայն, չէ՞ որ վաղ թե ուշ գալիս է «եթե ոչ ես, ապա՝ ո՞վ» բանաձևի գիտակցումը:

ԵՄ-ՀՀ ԱՊԱԳԱ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ

ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապրիլ 2015

Արևելյան գործընկերության գալիք՝ չորրորդ գագաթնաժողովը եւ Եվրոպական հանձնաժողովի կողմից իրականացվող Եվրոպական հարեւանության քաղաքականության (ԵՀՔ) վերանայումը պահանջում են ԵՄ-ի հետ Հայաստանի համագործակցության եւ այդ գործընթացում տարբեր սուբյեկտների, այդ թվում քաղաքացիական հասարակության (ՔՀ) ներգրավվածության գնահատում: Ընդ որում, առավել կարեւոր է այդ ներգրավվածության վերջին՝ որոշիչ փուլի գնահատումը:

Ռուսաստանի վկայակոչվող ճնշմանը՝ տեղի տալով՝ պաշտոնական Երեւանը 2013 թվականի սեպտեմբերի 3-ին հայտարարեց Մաքսային միությանը (ՄՄ) անդամակցելու որոշման մասին, ինչով անուղղակիորեն հրաժարվեց Եվրամիության հետ Ասոցացման համաձայնագրի նախաստորագրումից: Դա ոչ միայն տապալեց նախորդ տարիների եվրաինտեգրման գործընթացը Հայաստանում, այլ նաեւ վտանգեց բարեփոխումների օրակարգը եւ որոշումների կայացման ժողովրդավարական ու հաշվետու գործընթացները: Այն բանից հետո, երբ եվրաինտեգրման հայեցակարգը կասկածի տակ դրվեց, նոր ձեւաչափեր կամ հետեւողական երկխոսության գործընթացներ չեկան փոխարինելու կամ թարմացնելու Գործընկերության եւ համագործակցության համաձայնագիրը, ԵՀՔ Գործողությունների ծրագիրը կամ Ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունները: Այս հանգամանքը որոշակի դժվարություններ ստեղծեց հայաստանյան քաղաքացիական հասարակության համար՝ ՀՀ-ԵՄ համագործակցության համատեքստում իր դերակատարությունը հստակեցնելու առումով:

Այս համատեքստում Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմը (ԱլԳ ՔՀՖ ՀԱՊ)՝ որպես եվրաինտեգրման հեռանկարին հարող հայաստանյան հասարակության անբաժան մաս, իր խորը մտահոգությունն է հայտնել իրավիճակի վատթարացման վերաբերյալ եւ կարեւորել է ԵՄ-ի հետ համագործակցության նոր օրակարգի մշակումը, որը հնարավորություն կընձեռի համարժեքորեն արձագանքել նոր մարտահրավերներին եւ այս գործընթացում ձեւակերպել ՔՀ դերը՝ խթանելով վերջինիս մասնակցությունը եւ ներդրումը երկրի զարգացման գործում:

Արևելյան գործընկերության՝ Ռիգայում կայանալիք գագաթնաժողովից առաջ ստեղծված իրավիճակը պարունակում է փաստացի ռիսկեր եւ մարտահրավերներ: Չնայած ՀՀ գործող իշխանությունների հետ ունեցած հսկայական հակասություններին եւ անվստահությանը, քաղաքացիական հասարակությունը իշխանությանը համարում էր գործընկեր՝ Եվրոպական ինտեգրման ընդհանուր օրակարգի հարցում: 2013 թվականի սեպտեմբեր 3-ի կտրուկ նահանջից հետո խորը հակասություններ ի հայտ եկան ՀՀ իշխանությունների եւ անկախ քաղաքացիական հասարակության ռազմավարական տեսլականների, առաջնահերթությունների եւ նպատակների միջեւ, ինչը շարունակում է խոչընդոտել կողմերի միջեւ կառուցողական երկխոսությանը: Այս լույսի ներքո, կարվեն նաեւ տարաձայնությունները իրենց արժեքներին հավատարիմ մնացող, անկախ ՔՀ-ների եւ այսպես կոչված ԳՈՆԳՈ-ների (GONGOs) ու ԲԻՆԳՈ-ների (BINGOs) միջեւ, քանզի վերջիններս, ինչպես միշտ, ավելի հարմարվողական

դիրքորոշում կրնադնեն կառավարության նկատմամբ: Մա թերեւս ավելի կխորացնի ՔՀ դաշտում առկա հակասությունները եւ զգալիորեն կնվազեցնի վերջինիս արդյունավետությունը, եթե քաղաքացիական հասարակությունը, ինչպէս նաեւ միջազգային/դոնոր հանրությունը համարժեք ձեւով չարձագանքեն ստեղծված նոր իրավիճակին: Հետեւաբար, ինչպիսին էլ որ լինի ԵՄ-ՀՀ նոր, իրավաբանորեն պարտավորեցնող փաստաթղթի ձեւաչափը եւ բովանդակությունը, այն պետք է անդրադառնա քաղաքացիական հասարակության ներգրավվածությանը: Այս ուղղությամբ ԵՄ քաղաքականությունը պետք է ունենա մեխանիզմներ, որոնք թույլ կտան բացահայտել եվրոպականացման իրական կողմնակիցներին եւ մերժել կեղծ ՔՀԿ-ներին:

Մեկ այլ մարտահրավեր է այն, որ Մաքսային միությանը անդամակցելով, Հայաստանի ղեկավարությունից ակնկալվում է ներմուծել քաղաքացիական հասարակության նկատմամբ վերահսկողության առավել խիստ մոդել: Վտանգ կա, որ ժողովրդավարական ինստիտուտների, իրավունքների եւ սկզբունքների (հավաքների ազատության, հասարակական կազմակերպությունների, լրատվամիջոցների, ընդդէմ խտրականության) վերաբերյալ շրջանառվող օրենսդրական նախաձեռնությունները, որոնք ներկայումս քննարկվում են քաղաքացիական հասարակության հետ, կարող են աղավաղվել, երբ դուրս գան թափանցիկ քննարկումների փուլից եւ հայտնվեն խորհրդարանում, որը, փաստացիորեն, քաղաքական որոշումների կայացման տիրույթ է:

Քաղաքացիական հասարակության համախմբման, ամրապնդման եւ արդյունավետության բարձրացման ուղիների սահմանափակման փորձերը կարող են ուղղված լինել հիմնարար ազատությունների դեմ, որոնք վերջին տարիների Հայաստանի իրական ձեռքբերումներն են եղել: Հայաստանի օրենքների մշակման գործընթացներում եվրոպական կառույցների զգալի ներգրավվածությունը ազդեցիկ գործոն է հանդիսացել Ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունների ընթացքում եւ, թերեւս, կարող էր ավելի ազդեցիկ դառնալ ԱՀ-ի ստորագրումից հետո: Ներկայումս այդ ներգրավվածության բացակայությունը կարող է ժողովրդավարական արժեքներին հավատարիմ հայաստանյան համայնքին միայնակ թողնել բացասական միտումների առջեւ:

Այլ կերպ ասած, եվրաինտեգրման՝ կասկածի տակ դրված քաղաքականության հետեւանքը եղել է այն, որ ներկայումս քաղաքացիական հասարակությունը շատ ավելի քիչ միջոցներ եւ մեխանիզմներ ունի իշխանությունների վրա էականորեն ազդելու համար: Հասկանալի է, որ ԵՄ օրակարգը Հայաստանում այժմ պակաս հավակնոտ է, ինչը կարող է քաղաքացիական հասարակության ինստիտուտների մասնակցությունը եւ նրանց ազդեցությունն այդ նախաձեռնությունների վրա պակաս պարտավորեցնող դարձնել: Վերջինս անխուսափելիորեն կհանգեցնի ՔՀ շահերի պաշտպանության ներուժի նվազմանը:

Ուկրաինական վերջին զարգացումների համատեքստում Հայաստանում հասարակական կարծիքի ապակողմնորոշումը եւ ռուսական առաջատար ՁԼՄ-ների գործադրած գաղափարական ճնշումը խեղաթուրել են Եվրամիության մասին եղած պատկերացումները եւ նվազեցրել եվրոպական արժեքների ու չափանիշների գիտակցման եւ ընդունման մակարդակը: Ցավոք, հայկական ՁԼՄ-ները չեն կարողանում հակակշռել ռուսական հեռուստատեսության կողմնակալ լուսաբանմանը եւ ապահովել երկրի տեղեկատվական անվտանգությունը: Արդյունքում, հայաստանյան լսարանը դարձել է Ռուսաստանի վարած քարոզչական պատերազմի թիրախներից մեկը: Իրականում, եվրաինտեգրման գաղափարը Հայաստանում

ավելի շատ տուժել է ոչ թե Մաքսային միությանը անդամակցելու՝ ՀՀ իշխանությունների որոշումից հետո, այլ՝ ուկրաինական ճգնաժամի ընթացքում: Մա Հայաստանի քաղաքացիական հասարակության համար լրացուցիչ դժվարություններ է ստեղծել ժողովրդավարության, մարդու իրավունքների, հանդուրժողականության, բազմազանության եւ եվրոպական քաղաքական ու հասարակական մոդելի հետ ասոցացվող այլ սկզբունքներ հանրության շրջանում խթանելու գործում:

Նկատի ունենալով քաղաքացիական հասարակության առջեւ ծառայած վերոհիշյալ վտանգները եւ մարտահրավերները, ԵՄ-ՀՀ համագործակցության եւ ՔՀ ներգրավվածության ապագա ռազմավարությունը մշակելիս պետք է հաշվի առնել հետեւյալ եզրահանգումները:

Դոնոր համայքը պետք է առավել քան նախկինում՝ հաշվի առնի հայտատուների ազնվությունը եւ վստահելիությունը ԵՄ դրամաշնորհներ տրամադրելիս: Հաշվի առնելով կառավարության՝ Մաքսային միությանը անդամակցելու հրամայականը, ԵՄ-ի կողմից հատկացված միջոցները, սխալ ձեռքերում հայտնվելու դեպքում, կարող են օգտագործվել ՄՄ ինտեգրման համար: Այդ ռիսկերը նվազեցնելու նպատակով, դրամաշնորհների ստացման համար դիմելու կարգը պետք է վերանայվի եւ բարելավվի: Հայտատու կազմակերպության պատմությունը, նախկին գործունեությունը եւ վստահելիությունը պետք է մանրամասնորեն ուսումնասիրվեն դրամաշնորհի տրամադրման որոշում կայացնելուց առաջ: «Քաղաքացիական հասարակության քարտեզագրում» կոչվող պարբերական նախաձեռնությունը պետք է վերափոխել այնպես, որ վերջինս ավելի շատ տեղեկատվություն պարունակի գործնական օգտագործման համար:

Այս առումով, գոյություն ունի ՔՀԿ դաշտի համապարփակ հետազոտության անհրաժեշտություն, որը կներառի առկա ՔՀԿ-ների ինվենտարիզացիա եւ բազմակողմանի, օբյեկտիվ տվյալներ կտրամադրի Հայաստանում ՔՀ ինստիտուտների վերաբերյալ: Թեպետ այդպիսի փորձեր արդեն իրականացվել են դաշտում, այդ թվում նաեւ ԵՄ-ի կողմից հատկացված միջոցներով, ցավոք, այդ հետազոտությունները բավարար օբյեկտիվորեն չեն արտացոլում Հայաստանի ՔՀ դաշտի իրողությունները: Գոյություն ունեցող բացը լրացնելու համար անհրաժեշտ է անցկացնել Հայաստանի քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետեւողական եւ օբյեկտիվ քարտեզագրում՝ գործնական տվյալներ կուտակելու եւ ՔՀ դաշտը խորապես հասկանալու նպատակով: Հաշվի առնելով ԱլԳ ՔՀՖ Հայաստանի ազգային պլատֆորմի կարգավիճակը, ՔՀԿ-ների հետ համագործակցության հարուստ փորձը եւ գործունեության լայն ոլորտը, ՀԱՊ-ը հանդիսանում է կոմպետենտ կառույց՝ այս դերը ստանձնելու համար:

Որոշումների ընդունման գործընթացներից ՔՀ ինստիտուտների հետագա օտարման եւ իշխանությունների վրա ազդելու մեխանիզմների սահմանափակման վտանգները կանխելու համար պետք է կարելորել կարողությունների զարգացման ծրագրերը, որոնք կբարձրացնեն ՔՀԿ-ների դիմադրողականությունը նոր սահմանափակումների նկատմամբ: Այս առումով, հիմնարար ազատությունների ամրապնդմանն ուղղված ծրագրերը նույնպես պետք է ակտիվորեն խրախուսվեն:

Հավասարապես կարելու է նաեւ հայաստանյան ՔՀԿ-ների եւ ԱլԳ մյուս 5 երկրների ՔՀ ինստիտուտների միջեւ շփումների ակտիվացումը: Հաշվի առնելով ԱլԳ գործընկեր երկրների ինտեգրման տարբեր փուլերը եւ զարգացումների տարբեր ընթացքը երկրներից

յուրաքանչյուրում, փորձի փոխանակումը եւ փոխգործակցությունը երկկողմ եւ բազմակողմ ձեւաչափերով, կարող է մեծապես նպաստել կարողությունների զարգացմանը, գործողությունների համակարգմանը եւ արագ արձագանքմանը տարածաշրջանի երկրների ՔՀ կառույցների միջեւ:

Աջակցության կարիք ունեն նաեւ անկախ, ժողովրդավարական արժեքներ տարածող ՔՀ-ները լրատվամիջոցների հետ կապող նախաձեռնությունները: Մա կարող է դրական ազդեցություն ունենալ Հայաստանի տեղեկատվական դաշտի վրա՝ հակազդելով ժողովրդավարական արժեքները, հավասար իրավունքների եւ հնարավորությունների սկզբունքները վարկաբեկող լրատվությանը, առավել եւս, որ վերջին ամիսներին վերոհիշյալ ժողովրդավարական սկզբունքների նկատմամբ ոտնձգությունները առավել քան երբեւէ հաճախացել են: Ոչ պաշտոնական, կենդանի քննարկումների միջոցով հասարակությանը իրազեկելու եւ եվրախնտեգրման գործընթացի ու դրա գործիքների վերաբերյալ արհեստականորեն արմատացած կարծրատիպերի դեմ պայքարելու փորձերը նույնպես պետք է լայնորեն խրախուսվեն: Օրակարգում պետք է նաեւ ընդգրկված լինեն ԵՄ-ՀՀ Ասոցացման համաձայնագրի վերաբերյալ շրջանառվող հերյուրանքների հերքմանը ուղղված աշխատանքային նյութերի մշակումը: Վերոհիշյալ ծրագրերին ԵՄ աջակցությունը, որպես քաղաքացիական հասարակության հետ աշխատանքի բաղկացուցիչ մաս, շատ կարևոր է Հայաստանի համար:

Առկա ռիսկերի կանխմանը ուղղված վերոհիշյալ մեթոդների նկատմամբ որքան ավելի հետեւողական լինի վերաբերմունքը Ռիգայի գագաթնաժողովում եւ դրան հաջորդող ԵՄ-ՀՀ հարաբերությունների կարգավիճակի շուրջ երկկողմանի բանակցությունների ընթացքում, այնքան ավելի արդյունավետ կլինեն այդ հարաբերությունները, իսկ բարեփոխումների օրակարգի շուրջ բանակցություններում ՀՀ կառավարության, ԵՄ կառույցների եւ քաղաքացիական հասարակության (հիմնականում՝ ՔՀՖ Հայաստանի ազգային պլատֆորմի) ներգրավմամբ եռակողմ ձեւաչափի հաստատմանն ուղղված ջանքերը անարդյունք չեն մնա:

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԵՐԸ

Մայիս 2015

Հայաստանում բոլորը խոսում են իշխանությունների և հասարակության, քաղաքացիների միջև երկխոսության մասին: Այս թեման նորաձեւ է դարձել մասնավորապես Արեւմուտքից հովանավորվող տարբեր ծրագրերի շնորհիվ, որոնք ենթադրում էին հանրային լայն ներգրավվածություն, մասնակցություն: Երկխոսությունը կարելու է ինչպես իշխանական կառույցների, քաղաքական կուսակցությունների, այնպես էլ հասարակական կազմակերպությունների, փորձագիտական հանրության ներկայացուցիչների, լրատվամիջոցների կողմից: Մասնավորապես, մեծ ուշադրություն է դարձվում քաղաքականության մշակման ու համաձայնեցման (policy dialogue) շուրջ երկխոսության մշակույթի զարգացմանը: Միեւնույն ժամանակ, այդպիսի մշակույթի ձեւավորման ուղղությամբ եական առաջընթաց արձանագրում են միայն իշխանական օղակներում և նրանց մոտ կանգնած շրջանակներում: Վերջիններս, նույնիսկ ընդունելով երկխոսության կայացման համար խոչընդոտների առկայությունը, դրանց հիմքում տեսնում են բնական, օբյեկտիվ պատճառներ: Մինչդեռ նրանց ընդիմախոսները հակված են երկխոսության չկայացած կամ թերի լինելը բացատրել երկրի, պետության համակարգային հիմնախնդիրներով, որոնք չեն կարող ինքնըստինքյան լուծվել և խորը վերափոխումներ են պահանջում:

Իշխանության ներկայացուցիչների մեծ մասի կարծիքով հասարակական կազմակերպությունները հաճախ ոչ կոմպետենտ են ու միեւնույն ժամանակ՝ հավակնոտ, իսկ քաղաքացիական հասարակության միջավայրում տարածված է համոզմունք, որ ե՛ւ գործադիր, ե՛ւ օրենսդիր, ե՛ւ տեղական ինքնակարավարման մարմինները մեծ մասամբ ՀԿ-ների հետ համագործակցության սուկ պատրանք են ստեղծում: Իշխանություն-քաղաքացիական հասարակություն ձեւաչափով քննարկումները որպես կանոն անցնում են վերից վար հաղորդակցության սկզբունքով, այսինքն իշխանությունները պարզապես հայտնում են իրենց որոշումների կամ անելիքների մասին, լավագույն դեպքում՝ լսելով, բայց հաշվի չառնելով դիմացիների այլընտրանքային մոտեցումները և առաջարկությունները: Այս իրողությունը իր հաստատումը ստացավ նաեւ վերջերս իրականացված [հետազոտության](#) արդյունքներում, որը իրականացրել են Երեւանի մամուլի ակումբը և Արեւելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմի քարտուղարությունը՝ Եվրամիության կողմից ֆինանսավորվող [«Քաղաքացիական հասարակություն. երկխոսություն հանուն առաջընթացի» ծրագրի](#) աջակցությամբ:

Համագործակցության վերաբերյալ հակասական պատկերացումները շատ հաճախ հանգեցնում են առձակատման: Իշխանությունները համարում են, որ առանձին ոլորտներում (բնապահպանություն, ընտրական գործընթացներ, սեփականության իրավունք և այլն) ակտիվ քաղաքացիները չափից դուրս արմատական են կամ նույնիսկ սաղրանքերի են դիմում, իսկ հակադիր կողմն այդ արմատականությունը հիմնավորում է նշված ոլորտներում տիրող խիստ անհանդուրժելի իրավիճակով: Այլ կերպ ասած, կոնֆլիկտայնությունը ստանում է «քաղաքականացում» պիտակը, որը երեւան է գալիս բոլոր այն դեպքերում, երբ անկախ

քաղաքացիական ինստիտուտների դիրքորոշումները վերաբերում են իշխանական վերնախավի արմատական եւ հիմնականում ոչ լեզիտիմ շահերին: Իսկ երկխոսության սահմանափակումը միայն այն ոլորտներով, որտեղ այդ շահերին դիպչելու հավանականությունը բացառված է կամ նվազագույնի է հասցված, կնշանակի ոչ կառավարական սեկտորի դերը նեղացնել՝ մինչև անընդունելի փոքր մասշտաբների: Թեև չի կարելի ժխտել, որ քաղաքացիական հասարակության առանձին ներկայացուցիչների խիստ քաղաքական հակումները խոչընդոտում են արդյունավետ հաղորդակցությանը, սակայն դա ավելի շուտ բացառություն է, քան՝ կանոն:

Ինչպես նշվեց, արդյունավետ երկխոսության հնարավորությունները մեծամասամբ պայմանավորվում են արտաքին քաղաքական գործոններով: Եվրամիության հետ Ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցություններին զուգահեռ՝ քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը դառնում էր ավելի առարկայական: Նման գործընթացի բացակայության պայմաններում ՀՀ իշխանություններից դժվար է սպասել որևէ նախաձեռնություն երկխոսության ուղղությամբ: Արեւելյան գործընկերության շրջանակներում քաղաքացիական հասարակության դերը շարունակում է կարելորդել, բայց ԵՄ-ՀՀ հարաբերություններում այսօրվա անորոշությունը երկիրը դուրս է պահում արդիականացման օրակարգից ու հետեւապես նաեւ՝ արդյունավետ երկխոսությունից: Ինչպես նշել է վերոհիշյալ հետազոտության շրջանակներում հարցվածներից մեկը. «Եթե սայլով ես երթեւեկում, նավթի համաշխարհային գները քեզ վրա չեն ազդում»:

Մինչեւ 2009 թվականը՝ ԵՄ Արեւելյան գործընկերության նախաձեռնության մեկնարկից առաջ, երկխոսությունը կրում էր հիմնականում ձեւական բնույթ, սակայն ԱլԳ-ի ակտիվ փուլի շրջանակներում դրա արդյունավետությունը բարձրացել էր: Միեւնույն ժամանակ, բարեփոխումների իրականացման գործում քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը միջազգային ծրագրերով պայմանավորելը չի կարող չմտախոհել: Բայց այն ընկալումը, որ իշխանությունը ՀԿ-ի մոտ գալիս է միայն այն դեպքում, երբ դրսից մեծ ֆինանսական աջակցության պայմանը հանրային մասնակցությունն է լինում, լուրջ հիմքեր ունի: Եվ վերջին՝ մոտ երկու տարվա զարգացումները դա են ապացուցում:

Հայաստանյան քաղաքական գործիչները 2013-ի սեպտեմբերի 3-ից հետո քանիցս նշել են, որ Եւրասիական տնտեսական միության անդամակցությունը չի խանգարելու երկրի ժողովրդավարացմանը, սակայն այդ լավատեսությունը չեն կիսում հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները: Նույնիսկ եթե չլինեն ընդիմախոսների այնպիսի հետապնդումներ, ինչպիսիք տեղի են ունենում ԵՏՄ-ի մեր գործընկերների մոտ, քաղաքացիական հետ հաշվի նստելու պաշտոնյաների սովորությունը դեռ չձեւավորված նոր պայմաններում զրկվում է ամենաազդեցիկ ստիմուլներից: Եւրասիական ծրագրերը չեն ենթադրում իրական հանրային մասնակցություն, իսկ եւրախնտեգրացիոն հավակնությունների բացակայությամբ արեւմտյան կառույցները թեւեւ պահպանում են ՀԿ-ների հզորացման ու ներգրավման ավանդույթը, բայց վերջիններիս դերակատարության վերաբերյալ շատ դեպքերում ունեն բավականին մշուշոտ պատկերացումներ:

Գործունեության համար ոչ բարենպաստ մտնուլորտում է՛լ ավելի կարելոր է դառնում ՀԿ սեկտորի, ավելի ճիշտ՝ դրա անկախ մասի, համախմբվածությունը: Սակայն կարելի է

արձանագրել հակառակը՝ միմյանց հանդեպ անվստահություն, յուրատեսակ մրցակցություն, տարբեր հարցերում առաջնությունը, «հեղինակային իրավունքն» ամրագրելու ձգտում... Հաճախ նման վարվելակերպը խրախուսվում է դոնորների կողմից ու դառնում է վերջիններիս համակրանքը շահելու համար մղվող պայքարի արդյունք: Այդ տարանջատվածությունը իշխանություններին հնարավորություն է տալիս «համաձայնության գալ» (կամ էլ համաձայնության տպավորություն ստեղծել) սեկտորի առավել «հարմար», «ոչ պրոբլեմային» (իմա՝ լոյալ) հատվածի հետ: Այդ ամենի արդյունքում ընդհանուր առմամբ հասարակության մեջ ընկնում է ՀԿ-ների արդյունավետությունը եւ հեղինակությունը: Այս պարագայում հենց իրենք՝ հասարակական կազմակերպությունները պիտի մտահոգվեն այդ խնդրով ու լուծումներ գտնեն, քանի որ այսօրվա պայմաններում դա իրենց փոխարեն ոչ ոք չի անելու:

Այսօր քաղաքացիական հասարակությունը քաղաքական մակարդակում իր դիրքորոշումները ներկայացնելու խնդիր ունի: Ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչները դա բացատրում են քաղաքական ուժերի եւ ՀԿ-ների արհեստական հակադրմամբ, այնինչ միայն նրանց փոխգործակցության պայմաններում է ձեւավորվում այն ռեսուրսը, որը կարող է հակակշռել որոշումների կայացման՝ իշխանությունների մենաշնորհը: Մի կողմից, տարբեր գործոնների հետեւանքով Հայաստանում քաղաքական եւ քաղաքացիական միջավայրերի միջեւ իրականում ձեւավորվել է հստակ ջրբաժան, ինչն արտացոլված է նաեւ օրենսդրության մեջ: Մյուս կողմից, կարելի է ենթադրություն անել, որ թեեւ վերջին տարիներին քաղաքական ընդդիմությունը բազմիցս պատրաստակամություն է հայտնել ՀԿ դաշտի հետ սերտորեն համագործակցելու, բայց հետեւողական գործելակերպի դեֆիցիտը վերջիններին վանել է կուսակցություններից: Բավական մեծ տարածում է գտնում այն կարծիքը, որ իշխանությունների վարած քաղաքականության վրա ազդելու հարցերում ՀԿ-ներն ավելի ազդեցիկ են, քան՝ քաղաքական ընդդիմությունը, եւ որ ՀԿ-ները կուսակցությունների կարիքը չունեն: Սակայն դա նշանակում է, որ քաղաքացիական հասարակությունը պիտի ձեռք բերի նաեւ քաղաքական դաշտում գործելու ունակություն:

Երկխոսությանը քաղաքական մակարդակով ներգրավվելու ձեւերից մեկը խորհրդարանական լսումներին մասնակցելն է: Այստեղ է, որ մշակվում են անհրաժեշտ փաստարկներ բերելու, ոչ միշտ կառուցողական բանավեճում համոզիչ լինելու հմտությունները: Լսումներին կոմպետենտ ՀԿ-ների մասնակցությունը բավականին արդյունավետ կարող է լինել, սակայն դա միշտ չէ, որ ապահովվում է: Մասնավորապես, Հայաստանի եւ Եվրամիության միջեւ համագործակցության ակտիվացմամբ հետաքրքրված հասարակական կազմակերպությունների ներկայացվածությունը այն քննարկմանը, որը նախորդել էր ԱլԳ Ռիգայի գագաթնաժողովին, խիստ սահմանափակ էր: Միեւնույն ժամանակ, չի կարելի ասել, որ քաղաքացիական հասարակությունը ինքն էլ այդպիսի բոլոր հնարավորություններից կարողանում է լավագույնս օգտվել:

Մյուս ռեսուրսը, որ պարտավոր են արդյունավետ օգտագործել ՀԿ-ները՝ լրատվամիջոցներն են: Ավելին, առանց ԶԼՄ-ների՝ քաղաքացիական հասարակության կողմից բարեփոխումների պարտադրումը համարյա անհնարին է: Ինչքան էլ արդարացված լինեն պնդումները, որ հայկական լրագրությունը կենտրոնացած է գոյատեւման խնդրի վրա, անդրադառնում է միայն «թեժ» իրադարձություններին, կոմպետենտության պակաս ունի, այն բավականին բաց է

քաղաքացիական հասարակության առջև: Քաղաքական լճացման պայմաններում ՀԿ-ականները դառնում կարելուր նյութալիներ: Քաղաքացիական հասարակության թեմային անդրադառնալու՝ լրագրողների միտվածությունը պայմանավորված է դրամաշնորհային ծրագրերին մասնակցելու հետաքրքրվածությամբ: Մասնավորապես, բավական բարձր է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հիշատակումների տոկոսը եվրոպական/եվրասիական ինտեգրման թեմային նվիրված հեռուստահաղորդումներում, հրապարակումներում: 2015-ի մարտ ամսին անցկացրած հետազոտության համաձայն, համապատասխան նյութերում ՀԿ-ականների «ներդրումը» կազմել է 12.2%: Որոշ այլ թեմաների շուրջ արտահայտվելու համար ՁԼՄ-ները նույնպես հասանելի են ոչ կառավարական սեկտորի ներկայացուցիչներին: Դա որոշակի չափով վերջինների բացախոսության հետևանք է՝ ի տարբերություն հրապարակային դաշտում իշխանության ներկայացուցիչների եւ քաղաքական գործիչների դրսևորած պասիվության:

Կամա թե ականա, դառնալով բարեփոխումների հիմնական շարժիչ ուժն ու ամենահետեւողական պաշտպանը, ՀԿ-ները նոր հանգամանքներում այլևս իրավունք չունեն սահմանափակվել կողքից գնահատողի դերով ու պարտավոր են օգտագործել բոլոր հնարավորությունները՝ գործընթացների վրա ազդելու նպատակով:

ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ՝

ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ

Հունիս 2015

Տնտեսական դժվարությունների եւ աշխարհաքաղաքական հակասությունների հետ մեկտեղ Արեւելյան գործընկերությունը բախվում է եւս մեկ մարտահրավերի՝ քարոզչական պատերազմի: Այն սկսեց ծավալվել 2013 թվականի ԱլԳ Վիլնյուսի գագաթնաժողովի նախօրեին՝ որպես Մոսկվայի կողմից՝ ԵՄ-ի հետ Ասոցացման համաձայնագիր ստորագրել պատրաստվող չորս հետխորհրդային երկրների եվրոպական ինտեգրման հեռանկարների անընդունելիության հետեւանք, իսկ հաջորդ՝ 2015 թվականի մայիսին Ռիգայի գագաթնաժողովին այն ընդունեց հիրավի վիթխարի ծավալներ: Պատահական չէ, որ առաջին անգամ գագաթնաժողովի շրջանակներում գլխավոր առընթեր միջոցառումներից մեկը ՁԼՄ-ների համաժողովն էր, որտեղ քարոզչության թեման ամենակարեւորներից էր:

ԱլԳ բոլոր վեց երկրներում բնակչության համար հեռուստատեսությունը մնում է որպես նորությունների, քաղաքական տեղեկատվության հիմնական աղբյուր: Այն այդպիսին է համարվում այս երկրների 80% լսարանի համար՝ մի քիչ այս կողմ, մի քիչ այն կողմ շեղումներով: Հետեւաբար, սա ամենաարդյունավետ միջոցն է՝ ազդելու արտաքին եւ ներքին քաղաքականության առավել հրատապ հարցերի շուրջ հանրային կարծիքի վրա, ինչից էլ օգտվել են քարոզչական հակամարտության նախաձեռնողները:

Վեց երկրներից երեքում՝ Հայաստան, Բելառուս եւ Մոլդովա, ռուսաստանյան հեռուստաալիքները տեղեկատվական դաշտի կարեւոր դերակատարներ են: Այստեղ Ռուսաստանի առաջատար հեռարձակողների հաղորդումները վերահեռարձակվում են ազատ հասանելիությամբ՝ կա՛մ միջպետական համաձայնագրերով, կա՛մ տեղական ընկերությունների վերահեռարձակմամբ, կա՛մ էլ այսպես կոչված «հիբրիդային» ալիքների միջոցով: Դրանք այս կամ այն չափով դասվում են առավել հանրահայտ ՁԼՄ-ների շարքը: Բացի դրանից, տասնյակ այլ ռուսաստանյան հեռուստաալիքներ հասանելի են այն լսարանին, որն օգտվում է մալուխային ցանցերի օպերատորների ծառայություններից: Այս երեք երկրների բնակչության մեծ մասը Ռուսաստանի ՁԼՄ-ների միջոցով տեղեկատվություն ստանալու համար լեզվական արգելքների չի հանդիպում, եւ եթե նրանցում ռուսաստանյան ալիքները զիջում են իրենց լսարանի չափերով, ապա՝ միայն ազգային հեռարձակողներին:

Մակայն Ռուսաստանի ՁԼՄ-ները հանրային կարծիքի վրա ամենաշատն ազդում են այն երկրներում, որտեղ դրանց հեռարձակումը ոչ մի կերպ էլ ոչնչով սահմանափակված չէ, եւ Հայաստանն այդ իմաստով հատուկ վիճակում է: 2014թ. ապրիլի 7-ին Արեւելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմն իր խորը մտահոգությունը հայտնեց

Հայաստանի Հանրապետության տարածքում միջպետական համաձայնագրերի հիման վրա վերահեռարձակվող ռուսաստանյան երկու՝ «Россия-1» եւ «Первый канал» հեռուստաալիքների եթերում տեղ գտած այն հաղորդումների եւ սյուժեների կապակցությամբ, որոնցում բացահայտ

կերպով քարոզվում է այլատյացություն եւ սերմանվում է ատելություն՝ ազգային հիմքով: Ինչպես նշվում էր հայտարարության մեջ, այդ երեւոյթն առավել ակնհայտ է դարձել Ուկրաինայի շուրջ քաղաքական զարգացումների համատեքստում: Բացի նրանից, որ Մայրանից հետո Ուկրաինան անվանարկվում էր որպես չկայացած պետություն, ռուսաստանյան հեռուստատեսությունները ԱՄՆ-ին խիստ քննադատության էին ենթարկում միջազգային հարաբերություններում նորմերի խախտման համար, Եվրամիությանը ներկայացնում էին որպես գործիք Վաշինգտոնի ձեռքին, որն ուղղված է հետխորհրդային երկրների ընդհանուր շահերի դեմ: Այդ ընթացքում ինտենսիվ օգտագործվում էր թշնամության/ատելության լեզուն:

Պատահական չէ, որ «Россия сегодня» պետական ընկերության ղեկավար եւ «Россия 1» հեռուստաալիքի լրատվական-վերլուծական հաղորդումների վարող Դմիտրի Կիսելյովի անունն ընդգրկվել է Եվրամիության «անցանկալի անձանց» ցուցակում: Ռուսաստանյան հեռուստաալիքների, մասնավորապես ագրեսիվ քարոզչություն իրականացնող եւ դրանով իսկ հասարակական կարծիքը գաղափարական «մշակման» ենթարկող տեղեկատվական եւ քաղաքական հաղորդումների կասեցման հարցը դրվել է Արեւելյան գործընկերության եւ Եվրամիության մի շարք երկրներում:

ՔՀՖ Հայաստանի ազգային պլատֆորմի հայտարարության մեջ նշվում է, որ ռուսաստանյան այսօրինակ քարոզչության տարածումը Հայաստանի Հանրապետության տարածքում ապօրինի է, քանի որ հակասում է ՀՀ Սահմադրությանը (հոդված 14.1), օրենքներին (մասնավորապես՝ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքի հոդված 24-ի մի քանի կետերին), ինչպես նաեւ միջազգային մի շարք կոնվենցիաների, որոնց միացել է Հայաստանը, եւ որոնցով արգելվում է այլատյացության եւ ազգամիջյան թշնամության տարածումը: Այն մեծ վնաս է հասցնում մեր երկրի տեղեկատվական անվտանգությանը, այլ պետությունների հետ բարեկամական հարաբերություններին, ապակայունացնում է հասարակական կյանքը: Փաստորեն, զբաղեցնելով հանրային սահմանափակ ռեսուրս հանդիսացող ռադիոհաճախականությունները, ռուսաստանյան հեռուստաալիքները իրենց որոշ հաղորդումներում գործում են Հայաստանի ազգային շահերին հակառակ:

Այս կապակցությամբ միանգամայն հիմնավորված էին հայաստանյան քաղաքացիական հասարակության կոչերը՝ դիտարկել այն ընկերությունների գործունեության օրինականությունը, որոնք քարոզչական ուղղվածության համապատասխան հաղորդումների վերահեռարձակում են իրականացնում: Լիցենզավորված բոլոր հեռուստաընկերությունների (իսկ ռուսաստանյան ալիքները անարգել վերահեռարձակվում են հենց Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի (ՀՌԱՀ) կողմից տրված լիցենզիաների հիման վրա) բովանդակության համապատասխանեցումը ՀՀ օրենսդրության պահանջներին Հայաստանում հեռարձակման ոլորտը կարգավորող մարմնի անմիջական եւ առաջնային պարտականությունն է: Սակայն ՀՌԱՀ-ի կողմից ոչ մի պաշտոնական արձագանք չհետեւեց, իսկ իշխանական շրջանակների ներկայացուցիչները ոչ պաշտոնապես հղում էին անում քաղաքական կոնյունկտուրային, որը բացառում է ցանկացած խստություն ռազմավարական գործընկերոջ լրատվամիջոցների նկատմամբ:

Գուցե հարցն այդպես խիստ չդրվեր, եթե հայաստանյան հեռարձակողներն ի վիճակի լինեին լսարանին մատուցել աշխարհի այն պատկերի այլընտրանքը, որը Մոսկվայի կողմից Արեւմուտքի դեմ չհայտարարված քարոզչական պատերազմ մեկնարկելուց հետո ստեղծում են ռուսաստանյան գործընկերները: Ավելին, «Եվրոնյուս» հեռուստաալիքը (մասնավորապես, դրա ռուսալեզու տարբերակը), որը կարող է միջազգային կյանքի իրադարձություններն այլ ռակուրսով ներկայացնել, անհասանելի է դարձել այն հեռուստադիտողների համար, որոնք մալուխային փաթեթների բաժանորդներ չեն. իսկ դա երկրի բնակչության կեսից ավելին է: Ընդդիմադիր համարվող ռուսալեզու ալիքներն էլ (օրինակ, «Дождь», RTVI), Հայաստանում հասանելի չեն նույնիսկ մալուխային փաթեթներով: Հատկանշական է, որ Եվրոպական միության հետ Ասոցացման համաձայնագիր ստորագրած երկրների (Վրաստան, Մոլդովա, Ուկրաինա) հեռուստալսարանները հնարավորություն ունեն դիտելու այդ հեռարձակողների հաղորդումները, իսկ մնացած երեքը (Ադրբեջան, Հայաստան, Բելառուս)՝ ոչ, թերեւս միայն ինտերնետով:

Հայաստանում լսարանի համար զգայուն գործոն է դարձել ռուսաստանյան հեռուստաալիքների եւ ընդհանրապես ՁԼՄ-ների տեղեկատվական-քաղաքական եթերում հայկական ազգանուններով մարդկանց լայն ներկայացվածությունը: Նրանց ճնշող մեծամասնությունը՝ կինոռեժիսոր Կարեն Շահնազարով, քաղաքագետներ Անդրանիկ Միհրանյան, Սերգեյ Կուրդինյան, Սեմյոն Բաղդասարով, Արայիկ Ստեփանյան, «Россия сегодня» հեռուստաընկերության տնօրեն Մարգարիտա Միմոնյան, հեռուստահաղորդավար Ռոման Բաբայան, «Lifenews»-ի ղեկավար Արամ Գաբրելյանով, հանդես են գալիս վառ արտահայտված իշխանամետ ռուսաստանյան (այլ կերպ ասած՝ հակաուկրաինական, հակաարեւմտյան) դիրքերից: Քիչ չեն հայերը նաեւ Ուկրաինայի հարավ-արեւելքում տեղի ունեցող իրադարձությունները լուսաբանող ռուսաստանյան ՁԼՄ-ների թղթակիցների, ինչպես նաեւ՝ Ղրիմի եւ Դոնբասի ապստամբների, այդ շրջանների բնակչության խնդիրների մասին պատմող պյուժեների հերոսների շարքում: Ու թեւս նույն ժամանակաշրջանում ռուսաստանյան առաջատար հեռուստաընկերությունների կողմից Հայաստանը խիստ պասիվ էր լուսաբանվում, այդ երկրի լսարանը՝ վերը նկարագրված հանգամանքի բերումով եւ արտերկրի հայրենակիցների վարքի նկատմամբ իր ավանդական զգայունության պատճառով ապրումակցում էր եթերի համապատասխան բանավեճերին եւ պյուժեներին: Հայաստանյան հանրությունը առանց դրա էլ բաժանված է Մոսկվայի քաղաքականության նկատմամբ համակրանքով եւ հակակրանքով, իսկ Կրեմլի կողմնակիցների ճամբարում հայերի ներկայությունը լրացուցիչ նրբերանգ էր հաղորդում այդ հակասություններին: Ընդ որում, Ռուսաստան-ԱՄՆ, Ռուսաստան-Եվրամիություն, Մոսկվա-Կիև հակամարտության համատեքստում, հասարակության ներսում կոնֆլիկտայնությունը ձեւավորվում էր գլխավորապես այն հարցերի շուրջ, որոնք ազգային շահերի հետ անմիջական առնչություն չունեին:

Զուտ քաղաքական հարցերից բացի, մասնավորապես, հետխորհրդային երկրների համար եվրոպական ինտեգրման անհեռանկար լինելու, ԱՄՆ-ի եւ ՆԱՏՕ-ի բլոկում միավորված մյուս երկրների ազդեցիվ էության, Արեւմուտքի կողմից «հինգերորդ շարասյուն» ձեւավորելու եւ «գունավոր հեղափոխություններ» հրահրելու մասին պնդումներից զատ, քարոզչական միջոցներն օգտագործվում են նաեւ վարկաբեկելու համար արժեքներ՝ ջարդելով դրական

կարծրատիպերը: Այն կարծրատիպի աստիճանական դուրսբերումը, որ ռուսաստանյան հասարակությունը եվրոպական արժեքների կրող է, քրիստոնեական ավանդույթների եւ արեւմտյան էթիկայի հակադրումը, Մոսկվայի պրոպագանդիստների աշխատանքում կարեւոր տարրեր դառնալով, մեծապես ազդել են նաեւ հայաստանյան հեռուստալսարանի վրա: Եվ այդ գործոնը անհրաժեշտ է նկատի ունենալ ԵՄ-Հայաստան հարաբերությունների հետագա զարգացման հնարավորությունները գնահատելիս, ինչպես նաեւ՝ տեղեկատվական ոլորտում համապատասխան համալիր միջոցներ մշակելիս:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԱԼԳ ՌԻԳԱՅԻ

ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎԻՑ ՀԵՏՈ

Հուլիս 2015

2015թ. մայիսին տեղի ունեցած Արևելյան գործընկերության Ռիգայի գագաթնաժողովը Հայաստանի համար բավական լավատեսական նոտայով ավարտվեց: Թեև, այդ լավատեսությունը պայմանավորված է ոչ թե եվրոպական ինտեգրման հարցում Երևանի առանձնակի հաջողություններով, այլ ավելի շուտ՝ այն բանով, որ ԱԼԳ ոչ մի այլ երկրի համար Ռիգայի հանդիպումը չնշանավորվեց նոր նվաճումներով: Վրաստանը եւ Ուկրաինան, հակառակ ակնկալիքներին, այդպես էլ առաջընթաց չգրանցեցին ԵՄ-ի հետ մուտքի արտոնագրի ազատականացման հարցում: Արդեն իսկ առանց արտոնագրի մուտքի ռեժիմ ստացած Մոլդովայի կապակցությամբ ավելի շատ հնչում էին մտահոգություններ՝ կոռուպցիոն սկանդալների հետ կապված, քան՝ գովեստներ նվաճումների համար: Ադրբեջանը եւ Բելառուսն ընդհանրապես ամենաբարձր մակարդակով չէին ներկայացված: Իսկ գագաթնաժողովի ողջ մթնոլորտը տոգորված էր եվրոպական մայրցամաքի անվտանգության համար անհանգստությամբ՝ պայմանավորված առաջին հերթին Ուկրաինայի հարավ-արևելքում ընթացող կոնֆլիկտով, Ռուսաստանի հետ պատժամիջոցային հակամարտության պատճառով՝ ոչ այնքան լավատեսական տնտեսական կանխատեսումներով, հենց իր՝ Եվրամիության ներսում արևելյան հարեանների հետ ինտեգրման խորության շուրջ եղած հակասություններով եւ այլն:

Այս համատեքստում Հայաստանի հետ նոր համաձայնագրի շուրջ բանակցություններ սկսելու Եվրոպական հանձնաժողովի մանդատի մասին հայտարարությունը, Երևանի հետ կապված տեսանկյունից հիմնախնդիրների եւ հիասթափությունների հաղթահարման պայմաններում, կարելի է ասել, Ռիգայի ամենակարևոր իրադարձություններից էր: Այն տպավորությունն է, որ այլեւայլ մարտահրավերները, որոնց վերջին տարիներին բախվել է Եվրոպական հարեանության քաղաքականությունը, նպաստեցին 2013թ. սեպտեմբերի 3-ի եւ ՀՀ-ի կողմից Եվրասիական տնտեսական միությանը տրված նախապատվության հետեւանքով ստացած ցնցումից դուրս գալուն:

Մյուս կողմից, Ռիգայում առավել նշանակալից իրադարձությունների բացակայությունը կարելի է օրինաչափ համարել: Ի տարբերություն համանման միջոցառումների՝ Պրահայում (2009թ. մայիս՝ Արևելյան գործընկերության մեկնարկ), Վարշավայում (2011թ. սեպտեմբեր՝ ԵՄ-ի հետ ասոցացման գնացող երկրների ցանկի վերջնական ճշտում) եւ Վիլնյուսում (2013թ. հուլիս, Ուկրաինայի հետ Համաձայնագրի ստորագրման նախատեսում եւ եւս երեք երկրների հետ համաձայնության նախաստորագրում), Ռիգայի գագաթնաժողովը ավելի շատ ընկալվում էր որպես աշխատանքային միջոցառում՝ առանց աղմկոտ արարողությունների: Եվ չարժե գերագնահատել Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական միության միջեւ հարաբերությունների բարեհաջող ընթացքը, ինչին հակված են Երևանի պաշտոնական շրջանակները եւ իշխանամետ քաղաքական գործիչներն ու ՋԼՄ-ները: Այսպես թե այնպես, առավել խելամիտ կլինի Հայաստանի դեպքում վեցամյա Արևելյան գործընկերության արդյունքները ամփոփել՝ ԱԼԳ-ն դիտարկելով եվրասիական ինտեգրման ծրագրին մեր երկրի մասնակցության համատեքստում: Մասնավորապես, գնահատել քաղաքացիական

հասարակության հեռանկարները երկկողմ բանակցությունների՝ սպասվելիք նոր շրջափուլի նախօրեին:

Եվրոպական ընտանիքի հետ ինտեգրումը Հայաստանի կառավարության կողմից հռչակվել է որպես արտաքին քաղաքականության առաջնահերթություններից մեկը: 2010 թվականից ի վեր ԵՄ-ի եւ Հայաստանի միջեւ համագործակցությունը ակնհայտորեն առաջընթաց էր ապրում: Հայաստանի եվրաինտեգրման ջանքերը պսակվեցին ԵՄ-ի հետ Ասոցացման համաձայնագրի՝ ներառյալ Խորը եւ համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի (ԽՀԱԱՀ) շուրջ բանակցություններով: 2013թ. հունիսի 24-ին, Եվրոպական միության արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության հարցերով գերագույն ներկայացուցիչ Բարնոուսի Քեթրին Էշթոնը եւ ԵՄ ընդլայնման եւ եվրոպական հարեւանության քաղաքականության հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն պաշտոնապես հայտարարեցին, որ ԵՄ-ն եւ Հայաստանի Հանրապետությունը ավարտել են այդ բանակցությունները:

Այս իրավիճակը փոխվեց Ռուսաստանի նախաձեռնած Մաքսային միությանը միանալու՝ Հայաստանի մտադրության մասին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի սեպտեմբերի 3-ի հայտարարությունից հետո: Սրա հետեւանքը 2013թ. նոյեմբերին Վիլնյուսի գազաթնաժողովում նախատեսված՝ ՀՀ-ի եւ ԵՄ-ի միջեւ Ասոցացման Համաձայնագրի նախաստորագրման խափանումն էր: Այնուամենայնիվ, Երեւանի կտրուկ շրջադարձը եւ դրան հաջորդած Վիլնյուսի գազաթնաժողովը կարևոր իրադարձություններ էին, որոնք թույլ տվեցին ստուգել իրողությունները, հստակ եւ համարժեքորեն ձեւակերպել Եվրոպական միության հետ երկրի հարաբերություններում յուրաքանչյուր դերակատարի ձեռքբերումները, անհաջողությունները, հավակնությունները եւ պատասխանատվության աստիճանը:

Համաձայն ԱլԳ Քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմի հայտարարությունների՝ հրաժարվելով եվրոպական ինտեգրումից եւ ընտրելով ինտեգրման այլ մոդել, Հայաստանը «կորցրեց իր պետականությունը նոր որակի բարձրացնելու ամենաակնառու հնարավորությունը եւ ոտք դրեց իր ինքնիշխանության եւ ազգային անվտանգության համար իրական սպառնալիքներով լի ուղի: Մարտահրավեր նետվեց ժողովրդավարական ինստիտուտների, մարդու իրավունքների եւ այլ ոլորտներում բարեփոխումների իրականացման հեռանկարներին»:

2014թ. հոկտեմբերի 10-ին Հայաստանի կողմից Եվրասիական տնտեսական միությանը անդամագրվելու համաձայնագրի ստորագրումից հետո, քաղաքացիական հասարակությունը մտահոգվեց ոչ միայն երկրում ժողովրդավարության վիճակով, այլ նաեւ՝ բարեփոխումների խթանման պրոցեսում սեփական դերակատարության կապակցությամբ: Հայաստանի եվրոպամետ շրջանակների համար վճռական նշանակություն ստացավ լայն հասարակության առավել հզոր աջակցությունն ունենալու հարցը:

Սեպտեմբերի 3-ից ի վեր ԵՄ չափանիշներին մերձեցման հետեւանքով, ԵՀՔ գործողությունների պլանի իրականացման ընթացքում արձանագրված ինստիտուցիոնալ եւ կարգավորիչ փոփոխությունների գործընթացը հիմնականում կասեցվել էր, եւ որոշ նվաճումներ նույնիսկ հայտնվել էին կորստյան վտանգի առջեւ: 2013թ. հրատարակված ԱլԳ երկրների Եվրոպական ինտեգրման ինդեքսի արդյունքներով (Երեւանի մամուլի ակումբը համակարգում էր հետազոտության հայաստանյան հատվածը), որտեղ դեռեւս չէին արտացոլվում դեպի Եվրասիա

Երեւանի շրջադարձի հետեւանքները, մոտարկում հարթությունում Հայաստանի Հանրապետությունն ուներ լավագույն արդյունքները: Իսկ քաղաքացիական հասարակությունը, ինչպես նաեւ փորձագիտական շրջանակները, այն դերակատարներն են, որոնք կարող են դանդաղեցնել հակա-մոտարկումը, ինչը գրեթե անխուսափելի է նոր եվրասիական գործընկերների առջեւ ստանձնած պարտավորությունների պատճառով: Որքան շուտ ուժի մեջ մտնի ԵՄ-ն եւ Հայաստանը իրավաբանորեն կապող փաստաթուղթը, այնքան քիչ կորուստներ կլինեն նախկին նվաճումներից, եւ ի հայտ կգան հետագա բարեփոխումների հնարավորություններ:

Չնայած մոտակա բանակցությունների մասին հայտարարությանը եւ Հայաստանի կառավարության կողմից Եվրոպական միության հետ համագործակցությունը շարունակելու պատրաստակամության պարբերական հավաստիացումներին, ԵՄ-Հայաստան հարաբերությունների ներկա իրավիճակը կարելի է դեռեւս երկակի համարել: Երկկողմ հարաբերությունների ձեւաչափը եւ բովանդակությունը շարունակում է նույնիսկ Ռիգայի գագաթնաժողովից հետո մնալ անորոշ: Դժվար է ակնկալել, որ Ռուսաստանի եւ Արեւմուտքի միջեւ դեռեւս պահպանվող լարվածության եւ Երեւանի քաղաքականության վրա Մոսկվայի ունեցած վճռական ազդեցության պայմաններում, Հայաստանի իշխանությունները ԵՄ-ի հետ համագործակցության օրակարգի շուրջ հավակնություններ կդրսեւորեն: Եվրոպական հանձնաժողովը նույնպես, ունենալով 2013թ. սեպտեմբերի 3-ի եւ 2014-ին Երեւանի կողմից նախաձեռնողականության իսպառ բացակայության փորձը, չի պնդի ՀՀ-ի ինտեգրման խորության հարցում:

2015թ. սկզբին Հայաստանի կառավարության եւ Եվրոպական հանձնաժողովի կողմից համագործակցության շրջանակների նախնական հստակեցման փորձը թույլ է տալիս որոշել, թե 2011-2013թթ. բանակցված Ասոցացման համաձայնագրի նախագծի որ մասը կարող է պահպանվել երկկողմ նոր փաստաթղթում: Այդ հատվածը բավական մեծ է, եւ եթե այն ամբողջությամբ ներառվի իրավական նոր փաստաթղթում, Հայաստանի համար եվրոպական ապագան ապահովված կլինի: Ուստի, կունենա արդյոք Հայաստանը ԵՄ հետ նոր հավակնոտ փաստաթուղթ՝ կախված է նրանից, թե որքանով երկրի եվրոպամետ համայնքը կկարողանա գործադրել բոլոր հնարավոր ջանքերը եւ առաջ մղելով ինտեգրացիայի գաղափարը, փոխհատուցել պաշտոնական Երեւանի եւ Բրյուսելի նախաձեռնողականության պակասը:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԿԱՍԿԱԾԵԼԻ

ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբեր 2015

Անկախ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունման եւ փոփոխությունների պատմությունը սերտորեն կապված է ոչ թե պարզապես ազգային պետականության կայացման հետ, այլ նաեւ՝ երկրում եվրոպական քաղաքական եւ քաղաքակրթական մոդելի իրացման գործընթացի հետ: Հենց եվրոպականացման ուղղությունն է եղել 1995թ. Սահմանադրության մշակման հիմքում. այն ժամանակ շատ էր խոսվում ֆրանսիական փորձի մասին: Եվ չնայած այն ժամանակ այդ նախագծի նկատմամբ տարածված քննադատությանը՝ նախագահին վերապահվող արտակարգ իրավասությունների համար, չի կարելի ժխտել, որ 1995-ին ընդունված Հիմնական օրենքը միանգամայն համապատասխանում էր եվրոպական երկրի կարգավիճակին: 2005թ. մշակված ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագիծն անմիջականորեն կապված էր Եվրոպայի խորհրդի առջեւ ստանձնած պարտավորությունների կատարման՝ մասնավորապես, խորհրդարանական օմբուդսմենի ինստիտուտի եւ տեղական ինքնակառավարման համակարգի ձեւավորման հետ: Այլ կերպ ասած, թեեւ քվեարկության գործընթացը եւ ձայների հաշվարկը բավական վարկաբեկեցին 1995 եւ 2005թթ. հանրաքվեները, սակայն բուն նախաձեռնությունների հիմնավորվածությունը դժվար է վիճարկել:

Այդ իմաստով ՀՀ նախագահի՝ 2015 թվականին Սահմանադրության փոփոխությունների նախաձեռնությունը պատշաճ հիմնավորում չունի: Գործող Հիմնական օրենքը ոչ մի կերպ չի խոչընդոտում առավել հրատապ բարեփոխումների իրականացմանը կամ միջազգային պարտավորությունների կատարմանը: Եթե անգամ դրանում առկա են դրոյթներ, որոնք կաշկանդում են օրենսդրության կատարելագործմանը, օրինակ, զանգվածային լրատվամիջոցների կամ հանրային կառավարման ոլորտներում, ապա փոփոխությունների նախագիծը դրանց ոչ մի կերպ չի անդրադարձել: Գոյություն չունի սահմանադրական ճգնաժամ, եւ երկրի ժողովրդավարական զարգացման խոչընդոտը ոչ թե Հիմնական օրենքն է, այլ՝ ՀՀ իշխանությունների քաղաքական կամքի բացակայությունը: Այդպիսի փոփոխությունների հանրային պահանջ չկա, ինչը պարունակում է քվեարկության ցածր մասնակցության մեծ ռիսկ եւ որպես դրա հետեւանք՝ կեղծիքների լայն հնարավորություն: Այս նախաձեռնության շուրջ չկա հանրային կոնսենսուս, ինչը միջազգային քաղաքակիրթ պրակտիկայում սահմանադրական հանրաքվեի համար կարելու նախապայման է:

Իհարկե, շատ ընդդիմադիր կուսակցություններ տարիներով խոսում են նախագահականի կամ կիսանախագահականի նկատմամբ խորհրդարանական մոդելի առավելությունների մասին: Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ նախատեսված փոփոխությունների համար ուժեղ քաղաքական կուսակցությունների գոյությունը պարտադիր պայման է, մինչդեռ վերջին տարում այս ոլորտում մենք նահանջի ականատես եղանք: Այս նախաձեռնության վերաբերյալ քաղաքացիական եւ քաղաքական կառույցների լուրջ եւ լավ հիմնավորված վերապահումները սահմանափակում են լայն, բաց ու կառուցողական քննարկման հնարավորությունները:

Հանրության շրջանում լայնորեն տարածված է այն ընկալումը, որ նոր Սահմանադրությունը (հանրաքվեի դրված փաստաթուղթն իրականում իսկապես ավելի շուտ նոր Հիմնական օրենքի, քան՝ փոփոխությունների նախագիծ է) ապահովում է իշխանությունների վերարտադրությունը:

Միեւնույն ժամանակ, խիստ պարզունակ կլինի՝ դա ներկայացնել որպէս գործող Նախագահի իշխանության վերարտադրություն: Ոչ մի երաշխիք չկա, որ իր երկրորդ ժամկետի ավարտից հետո Սերժ Սարգսյանը կմնա երկրի ղեկավարի պաշտոնում: Այսպիսով, խոսելով վերարտադրության մասին, պետք է հասկանալ, որ ներկա իշխող էլիտան է վերարտադրվելու: Վերջինիս համար քաղաքականության, տնտեսության մեջ եւ իրավական համակարգում մենաշնորհը կորցնելու ռիսկերից խուսափելու լավագույն լուծումը, երբ լրանա Նախագահի պաշտոնավարման երկրորդ ժամկետը, նախագահական ընտրությունները, որպէս այդպիսին, բացառելն է: Դա թույլ է տալիս շրջանցել պետության նոր ղեկավարի անձի շուրջ փոխհամաձայնության հասնելու բարդ գործընթացը, ինչպէս նաեւ՝ կանխել բնակչության քաղաքական ակտիվության հերթական ալիքը, որը բարձրանում է հենց նախագահական ընտրությունների ժամանակ եւ, որպէս կանոն, նպատակաուղղված է լինում իշխանության փոփոխության: Բավական է հիշել 1996, 1998, 2003, 2008, 2013 թվականները... Էլ չենք խոսում այն մասին, որ ցանկացած ընտրությունների, հատկապէս նախագահականի ժամանակ, այդ էլիտային բավական թանկ է նստում իշխանություն պահելը՝ հենց ֆինանսական առումով: Այսպիսով, անցումը խորհրդարանական հանրապետության՝ դառնում է այն լուծումը, որն, ակնհայտ փոխընդունելի «գահաժառանգի» բացակայության պայմաններում, այդ էլիտային ազատում է հիմնական ռիսկերից:

Բացի նրանից, որ բացակայում են Սահմանադրության փոփոխության համար պատշաճ հիմքերը, նախատեսվող հանրաքվեի կապակցությամբ մտահոգվածությունը պայմանավորված է համապատասխան օրենսդրության մեջ առկա բացերով եւ երկրում համազգային ընտրությունների դառը փորձով: Դժվար է ակնկալել, որ հանրությունը կվստահի քվեարկության արդյունքներին եւ համապատասխանաբար, նման պայմաններում դժվար է պետականության իրավական հիմքերի ամրապնդման հույսեր տաճել: Հատկապէս, երբ նկատի ենք ունենում, որ թեւէ Հանրաքվեի մասին օրենքում ընթացիկ տարվա հունիսի 10-ին փոփոխություններ եղան, սակայն ո՛չ ընտրողների ցուցակի հրապարակման՝ տարիների պահանջը, ո՛չ էլ լրատվամիջոցներում քարոզարշավի անցկացման կարգավորումը պատշաճ լուծումներ չստացան:

Վերջապէս, գործող կառավարության հստակ եւ համարժեք ռազմավարության բացակայությունը՝ Հայաստանի առջեւ ներկայումս ծառացած ներքին եւ արտաքին այնպիսի լուրջ մարտահրավերների առնչությամբ, ինչպիսիք են օրենքի գերակայության հաստատումը, կոռուպցիայի հաղթահարումը եւ անարդյունավետ կառավարումը, համարժեք արձագանքը աշխարհաքաղաքական ցնցումներին եւ այլն, չպետք է քողարկված լինի Սահմանադրության փոփոխությունների պատրանքի տակ, ինչը պարզապէս ընկալվում է որպէս քաղաքական հավակնությունների դրսեւորում:

Այս համատեքստում շատ խելամիտ ու պատասխանատու դիրքորոշմամբ հանդէս եկավ ԱլԳ Քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմը: Չժխտելով գործող Սահմանադրության մեջ այնպիսի դրույթների առկայությունը, որոնք պահանջում են որոշակի փոփոխություններ, ՀԱՊ-ն իր խոր մտահոգությունն է հայտնել Հիմնական օրենքի վերանայման գործընթացի կապակցությամբ, համարելով, որ այդ նախաձեռնությունը ժամանակավրէպ է եւ չի բխում պետության եւ հասարակության շահերից:

Պլատֆորմը համոզված է, որ սահմանադրական բարեփոխումները պետք է հստակորեն տարանջատվեն ներկայիս քաղաքական կոնյունկտուրայից, ինչը սակայն, ընթացիկ իրադարձությունների համատեքստում՝ անհնար է: ՀԱՊ-ը ՀՀ իշխանություններին կոչ է արել ողջամիտ ժամկետով հետաձգել սահմանադրական փոփոխությունների հանրաքվեն՝ անցկացնելով այն առաջիկա համապետական ընտրություններից հետո: Դա քաղաքական բոլոր ուժերին թույլ կտա ներգրավվել սահմանադրական փոփոխությունների շուրջ հետագա քննարկումներում եւ այս հարցի շուրջ իրենց սեփական դիրքորոշումները ներկայացնել կուսակցական նախընտրական ծրագրերում: Հետաձգված հանրաքվեի նկատմամբ հանրային վստահության նախապայման կարող է լինել ՀՀ իշխանությունների կողմից 2017 եւ 2018 թվականներին ազատ եւ արդար ընտրություններ անցկացնելու երաշխիքների ապահովումը:

Չնայած այն հանգամանքին, որ, ինչպես նշվեց վերելում, այս անգամ Սահմանադրության փոփոխության նախաձեռնությունը ոչ մի կերպ կապված չէր Հայաստանի եվրոպականացման գործընթացի հետ, սակայն այդ նախաձեռնությունն ինքնին՝ կարող է որոշակի հետք թողնել եվրոպական կառույցների հետ մեր երկրի համագործակցության մասին ընկալումների վրա: Կասկած չկա, որ իշխանությունները Վենետիկի հանձնաժողովի փորձագիտական գնահատականները կօգտագործեն իրենց նպատակների լեգիտիմացնելու համար, իսկ հանրաքվեների անցկացման նկատմամբ ԵՄ, Եվրոպայի խորհրդի եւ ԵԱՀԿ՝ ավանդաբար թույլ հետաքրքրությունը կարող է հայ հասարակության կողմից ընկալվել որպես կեղծարարության խրախուսում: Իսկ Եվրամիության եւ Հայաստանի Հանրապետության միջեւ նոր համաձայնագրի շուրջ բանակցությունների մեկնարկի համընկնումը հանրաքվեի անցկացման ժամկետների հետ՝ դժվար է բարենպաստ անվանել:

ԱՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆ՝ ԵՄ-ՀՀ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՇԵՄԻՆ

Հոկտեմբեր 2015

Ակնհայտ է, որ Եվրոպական հանձնաժողովի եւ Արտաքին գործերի եվրոպական ծառայության (EEAS) կողմից պատրաստվող՝ Եվրոպական հարեւանության քաղաքականության (ԵՀՔ) վերանայումը ենթադրելու է Արեւելյան գործընկերության երկրներում քաղաքականության իրականացման տարբերակում: Ավելի խորը համագործակցություն է ակնկալվում այն գործընկերների հետ, որոնք ստորագրել են Ասոցացման համաձայնագիրը, ինչպես նաեւ առանձնահատուկ մոտեցում կառաջարկվի մնացած երեք երկրներին՝ Հայաստանին, Ադրբեջանին եւ Բելառուսին: Մասնավորապես, Հայաստանը սկսելու է ԵՄ-ի հետ բանակցությունները իրավական պարտավորություններ ենթադրող նոր համաձայնագրի շուրջ: Ոչ միայն վերջնական փաստաթուղթը, այլ նաեւ՝ դրա ողջ աշխատանքային գործընթացը իր ազդեցությունը կունենա Հայաստանի ներքին զարգացումների վրա, որոշակիացնելով երկրում բարեփոխումների հնարավորությունները:

ԵՄ որոշ պաշտոնյաների հայտարարությունները թույլ են տալիս եզրակացություններ անել 2013թ. սեպտեմբերին Երեւանի կատարած 180 աստիճան շրջադարձից Բրյուսելի քաղաք մի քանի դասերի վերաբերյալ: Նախ, ԵՄ-ն կփորձի բացառել ՀՀ ղեկավարության պատճառաբանումներն առ այն, թե անընդունելի են ՌԴ-ի հետ հարաբերություններին հասցվելիք վնասները, որոնց կարող են հանգեցնել եվրոպական գործընկերների հետ իր պայմանավորվածությունները: Փաստորեն, Երեւանից սպասում են նախապես բոլոր վիճելի հարցերի համաձայնեցում Մոսկվայի հետ, եւ միայն դրանից հետո Եվրամիության հետ նոր փաստաթղթի համապատասխան գլուխները կհամարվեն «փակված»: Երկրորդ, Բրյուսելը կխուսափի այնպիսի իրավիճակի կրկնությունից, երբ հայկական կողմը վերջին պահին անվտանգության նկատառումներով կհրաժարվի համաձայնագրի ստորագրումից: Այլ կերպ ասած՝ Հայաստանին կարող է առաջարկվել նախապես ներկայացնել մտահոգությունները, որպեսզի Եվրամիությունը կա՛մ օժանդակի դրանց վերացմանը, կա՛մ դանդաղեցնի/կանգնեցնի բանակցությունները: Եվ եթե նշված երկու սկզբունքները խստորեն կիրառվեն նոր գործընթացի ժամանակ, ապա մի կողմից այդ գործընթացը կարող է բավական ձգձգվել, սակայն մյուս կողմից՝ ապահովագրված լինել շրջադարձի կրկնությունից:

Երեւանին «իրավունք է վերապահվում» հպարտանալ, որ արդյունքում հաղթեց իր «եւ-եւ» մոտեցումը, երբ Եվրոպական միության հետ համագործակցությունը կարող է համատեղվել ԵԱՀԿ-ին անդամակցության հետ: Ինչպես նաեւ՝ որ ԵՄ-ի հետ համաձայնագիրը (“Association light”) չպետք է պարտադիր կերպով ներառի Խորը եւ համապարփակ ազատ առևտրի գոտուն (DCFTA) միանալը: Այսինքն, իբրեւ թե գերադասվեց 2013թ. աշնանը Հայաստանի առաջարկած, սակայն Բրյուսելի կողմից (որն ընդհակառակը՝ պնդում էր «կամ-կամ»-ի ընտրությունը) մերժված տարբերակը: Մինչդեռ, իրադարձությունների նման մեկնաբանությունը միանգամայն սխալ է եւ հազիվ թե նպաստի մեկնարկող բանակցային գործընթացի նկատմամբ կառուցողական մոտեցումներին:

Նախ, անկախ նրանից, թե 2013-ի փաստաթղթի բովանդակության քանի տոկոսը (80 թե 20) կտեղափոխվի նորի մեջ, վերջինիս համեմատությունը Ասոցացման համաձայնագրի նախագծի

հետ՝ ընդհանրապես պատշաճ չէ, քանի որ դրանք ինտեգրման տարբեր մակարդակներ են ենթադրում: Երկրորդ, Եվրոպական հանձնաժողովը 2013թ., ըստ էության, փաստաթուղթն առանց DCFTA-ի վավերացնելու մանդատ չունեւ, այդ պատճառով էլ նման գործարք առաջարկելն ի սկզբանէ անիմաստ էր, իսկ նոր մանդատ ստանալու համար ԵՀ-ին երկու տարի պետք եկավ: Երրորդ, «Եւ-Եւ» մոտեցման հաղթանակի մասին կարելի է խոսել այն դեպքերում, երբ համատեղվում են համագործակցության միեւնոյն խորություն ունեցող երկու մոդելները, եւ մեկը չի բացառում մյուսին: Այս իմաստով հենց 2013թ. Ասոցացման համաձայնագրի նախագիծն էր ենթադրում Ռուսաստանի, ինչպէս նաեւ ցանկացած այլ երրորդ կողմի հետ Հայաստանի համագործակցության համարժեք մակարդակ: Այն դեպքում, երբ Մաքսային միությանն անդամակցելը, ինչը գերադասեց Հայաստանը, բացառում էր նույն խորության համագործակցություն որեւէ մեկի հետ: Ուրեմն, որտե՞ղ է արտահայտված «կամ-կամ» մոտեցումը, որից այդքան խուսափում էր Երեւանը: Վերջապէս, չորրորդ, եթէ անգամ հրաշք տեղի ունենար, եւ ԵՄ-ն համաձայնէր 2013 թվականին վավերացնել Հայաստանի հետ Ասոցացման համաձայնագիրն առանց DCFTA-ի, Երեւանը, միեւնոյն է, չէր գնա դրան եւ իր առաջարկությունը հնչեցրել էր միայն այն պատճառով, քանզի վստահ էր, որ դա անիրականանալի էր: Շրջադարձում վճռական դեր ունեցած Ռուսաստանի համար սկզբունքային էր ինտեգրման իր նախագծին Հայաստանի միանալու եւ եվրաինտեգրումից հրաժարվելու՝ բուն խորհրդանշական փաստը, եւ ոչ թէ՛ այդ ծրագրերի պրակտիկ բովանդակությունը: Իրադարձությունների հետագա զարգացումը հաստատեց, որ ԵԱՏՄ շրջանակներում ստանձնած փախադարձ պարատավորությունների մեծ մասը չի գործում եւ չէր կարող գործել:

Երկու տարի առաջ տեղի ունեցածի օբյեկտիվ գնահատականից զատ, հանուն հետագա արդյունավետ համագործակցության, ե՛ւ Հայաստանի, ե՛ւ ԵՄ-ի համար կարելու է որոշել եվրոպականացմանն անվերապահորէն աջակցող հիմնական դերակատարների առաքելությունը: Մասնավորապէս, խոսքը Հայաստանի քաղաքացիական հասարակության համապատասխան հատվածի ներգրավվածության մասին է: Մինչ ԱլԳ երեք «առաջամարտիկների» հետ Ասոցացման համաձայնագրերը քիչ թէ շատ սահմանում են այս հատվածի առաքելությունը ինտեգրման գործընթացում, մնացածի (ներառյալ՝ Հայաստանը) պարագայում ոչ մի բան պարզ չէ: Գործընկերների տարբերակման հարցով զբաղվելիս, ԵՀԶ-ն վերանայելով, ԵՄ կառույցները, բնականաբար, այնքան խորը չեն գնացել՝ մոտեցումները նաեւ այդ երկրների քաղաքացիական հասարակությունների հանդէպ ձեւակերպելու համար:

Սկզբնապէս, քաղաքացիական հասարակությունը դիտարկվում էր որպէս Արեւելյան գործընկերությունում ինստիտուցիոնալ դերակատար: Սակայն ներկայումս գործընկերների տարբեր հավակնությունները, ոգևորություններն ու պարտավորությունները պահանջում են նաեւ յուրաքանչյուր երկրի համար քաղաքացիական հասարակության ներգրավման յուրահատուկ ռազմավարության մշակում: Այն չէր կարող նույնը լինել, ասենք, Վրաստանում, որտեղ ՀԿ հատվածը ներկայացնող շատ խաղացողներ էական դեր ունեն որոշումների կայացման գործում, եւ Ադրբեջանում, որտեղ առկա է բռնաճնշումների քաղաքականություն՝ ցանկացած ընդդիմախօսի նկատմամբ: Նոր՝ առանձնահատուկ մոտեցումներ ձեւավորելու գործը թողնված է ԱլԳ երկրներում իրագործվող տարբեր ծրագրերին եւ նախաձեռնություններին, սակայն մենք առայժմ չենք տեսնում որեւէ կոնկրետ գաղափար, թէ

ինչպես է այդ հարցը լուծվելու Հայաստանի դեպքում: Այդպիսի գաղափարների բացակայությունը կարող է վտանգել այն հսկայական ներուժը, որ կուտակված է մեր երկրի եվրոպամետ ՀԿ-ների հատվածում:

Որպես ԵՄ-ի հետ նոր իրավական փաստաթղթի մշակման գործընթացի հնարավոր աջակիցների՝ Հայաստանի քաղաքացիական հասարակության եւ փորձագիտական համայնքի համար ոչինչ չի նախատեսվում: Վտանգված է նույնիսկ բանակցությունների մասին հանրային իրազեկման ապահովումը, որը կարող էր լինել ԱլԳ Քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմի դերը: Կան հստակ նշաններ, որ Հայաստանի կառավարությունը կփորձի հնարավորինս փակ պահել փաստաթղթի վրա տարվող աշխատանքը: Միեւնույն ժամանակ, սպասվում է ավելի ուժեղ քննադատություն եւ դժգոհություն ԵՄ-ի հետ համագործակցելու ՀՀ-ի՝ հետաքրքրության շուրջ, քան Ասոցացման համաձայնագրի բանակցությունների ժամանակ էր:

2013-ից սկսած՝ Մոսկվան շատ ռեսուրսներ է ծախսել Հայաստանում հակաեվրոպական «ճակատ» ստեղծելու համար ոչ միայն քաղաքական գործիչների շրջանում, այլ նաեւ՝ ՋԼՄ-ներում եւ ՀԿ հատվածում: Եվրոպայում ներգաղթյալների ճգնաժամը, Մերձավոր Արեւելքում մեծ պատերազմի վտանգը, Ուկրաինայի չլուծված խնդիրները եւ այլ հարցեր լայնորեն օգտագործվելու են Հայաստանում հանրային կարծիքը մանիպուլյացիայի ենթարկելու համար: Այսպիսով, քարոզչական մեքենայի կողմից ստեղծվող ԵՄ բացասական պատկերը ժխտող պատշաճ պատասխանի բացակայությունը, անկասկած, մարտահրավեր է լինելու Բրյուսելի եւ Երեւանի միջեւ երկխոսության համար: Մինչդեռ այդպիսի պատասխանը կարող էր հայտնվել միայն լավ մշակված տեղեկատվական քաղաքականության եւ դրա համար իրական քաղաքացիական հասարակության (ինչպես նաեւ՝ որակյալ լրատվամիջոցների) մոբիլիզացման շնորհիվ:

Նախկինում շատ է խոսվել ԵՄ աջակցությամբ Հայաստանում իրականացվող ծրագրերի եւ նախաձեռնությունների վերաբերյալ անկախ ուսումնասիրությունների անհրաժեշտության, ինչպես նաեւ՝ հարաբերությունների ընդհանուր առաջընթացի գնահատման մասին: Այնուամենայնիվ, ոչինչ չի հուշում այն մասին, որ երկկողմ համագործակցության նոր փուլում քաղաքացիական հասարակության վերահսկող դերը պահանջարկ կունենա: Այժմ հարցականի տակ է նաեւ այնպիսի հաջող նախաձեռնության շարունակությունը, ինչպիսին էր Եվրոպական ինտեգրման ինդեքսը, որը չափում էր համեմատում էր ԱլԳ վեց երկրներում եվրոպականացման գործընթացը: Այսպիսով, չնայած բանակցությունների առաջիկա մեկնարկի հետ կապված որոշակի խանդավառությանը, Հայաստանի եվրոպական ապագայի հեռանկարները մնում են անորոշ: